

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԽՈՇՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՆՊՐԱՂԱՐՁ ԶՈՒՅԻ ԶԱՐԴԵՐԻՆ

Հուլիսի 15-16-ը Շուշիում անցկացվեց «Աղբբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաբանական գնահատականի միջև միջազգային դատարան)» խորագրով առցանց միջազգային գիտագործնական համաժողով՝ նվիրված Շուշիի հայ բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպանության 100-րդ տարելիցին: Այն պետք է կայանար ս. թ. մարտի 23-ին, սակայն հայտնի պատճառներով հետաձգվել էր:

Գիտաժողովի կազմակերպիչներն են ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը, «Մշակույթ և ապագա» հիմնադրամը (Ռուսաստան):

Համաժողովի բացումից առաջ ներկայացվեց «Շուշին պատմական լուսանկարներում և արխիվային փաստաթղթերում» Հայաստանի պետական արխիվի ցուցահանդեսը:

Ընթերցվեց գիտաժողովի մասնակիցներին ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանի ողջույնի ուղերձը:

Համաժողովը ներածական խոսքով բացեց պատմական գիտությունների թեկնածու, ԱՀ ԿԳՄ նախարարի խորհրդակցական Մելանյա Բալայանը՝ մշելով, որ Աղբբեջանի կողմից համախառն կրկնվող սադրիչ գործողություններում նահատակված զինվորականներին, ինչպես նաև վերջերս կյանքից հեռացած պատմաբան-գիտնականներին, որոնցից երկուսը պետք է ելույթ ունենային այս գիտաժողովում:

Ներկայացվեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի ողջույնի խոսքը: Ողջույնի

ը, նրա ղեկավարության հակահայկական ու ռազմատենչ իռեռորաբանությունը այս պահին էլ վկայում են, որ Աղբբեջանի նպատակներն ու գործելաճը չեն փոխվել:

Գիտաժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ իրենց խոնարհումը բերեցին և հարգանքի տուրք մատուցեցին մեր հայրենիքի պաշտպանության համար Տավուշի դիրքե-

խոսք ասացին նաև ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարաբանյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Օրինաճի խոսք ասաց ՀԱԵ Արցախի բենի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Լիագումար նիստում լսվեցին «Շուշիի ավերումը. պատմություն և դասեր» (Արամ Սիմոնյան - ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն), «Միջազգային հարաբերությունները 1918-1920 թթ. և հայերի ողբերգությունը Շուշի քաղաքում. դասեր և հետևանքները» (Վալերի Ավանեսյան- ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր, պ.գ.դ., պրոֆեսոր), «Աղբբեջան. հիվանդություն պատմություն (ցեղասպանական քաղաքական վարքի ճնշումները)» (Ալեքսանդր Մանասյան - ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), «Ժողովրդագրական գործընթացները Շուշիում 19-րդ դարից մինչև մեր օրերը» (Վահրամ Բալայան- ԱրՊՀ, պ.գ.դ., պրոֆեսոր), «Հայոց ցեղասպանությունը Շուշիում և ժամանակակից աշխարհաքաղաքականությունը» (Վիկտոր Նադեժդին-Ռասևիչ-Վ.Բ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և

սոցիալական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, IMEMO RAS-ի ավագ գիտաշխատող (Ռուսաստան) զեկուցումները: «Լեռնային Ղարաբաղի հայերի ցեղասպանության, կոտորածների, ջարդերի զանգվածային փաստերի և Աղբբեջանի Հանրապետությունում ահաբեկչության ու հայատյացության ժամանակակից քաղաքականության ակունքները. պատմասոցիոլոգիական տեսանկյուն» Վիկտոր Կրիվոպուսկովի (գտնվում էր հիվանդանոցում) զեկուցումը կենտրոնի գիտաժողովի նյութերի հրատարակվելիք ժողովածուում:

Երկրորդ գիտաժողովը այնուհետև իր աշխատանքները շարունակեց «Աղբբեջանի իշխանությունների կազմակերպած Շուշիի հայ բնակչության ցեղասպանությունը. պատճառները, նպատակները, փուլերը և հետևանքները», «Արցախի 1918-1920 թթ. պատմական իրադարձությունների նենգափոխումները աղբբեջանական պատմագրության կողմից», «Շուշիի հայկական ժառանգության նկատմամբ Աղբբեջանի իրագործած մշակութային եղեռնի քաղաքականությունը», «Հայերի ցեղասպանությունը Աղբբեջանում» որպես պանթոնի բաղկացուցիչ մաս», «Շուշիի հայերի կոտորածների թեման փաստաթղթերում, գրական ստեղծագործություններում և պարբերական մամուլում»:

Գիտաժողովի մասնակիցներն ընդունեցին հայտարարություն:

«ԼՈՒՍԱՐԱՐ»



Ողջույնի խոսք

ԱՆՎՈՏՐՈՒՄ Է ԱՐՑԱՒԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆ ՈՒ ԱՋԱՏ ԱՊՐԵՆՈՒ ԿԱՄԸ

Այս օրերին աշխարհասփյուռ հայությունը նշում է Շուշիի հայերի կոտորածների 100-րդ տարելիցը: Հիշատակի օր է ոչ միայն մեր անմեղ նահատակներին օրհնելու և սրբացնելու, այլ նաև ոգեկոչման և հետագա պայքարի կոչ:

1918թ. մայիսի վերջերին Այսրկովկասի երեք հանրապետությունների հռչակումից հետո քաղաքական քարտեզում տեղ փնտրող արհեստածին Աղբբեջան պետության մուսավաթական կառավարությունը երիտթուրքերի և նրան հաջորդած քեմալականների հովանու ներքո նպատակադրվեց արևմտահայության ցեղասպանության ճանապարհով իրականացնել համաթուրքականության ծրագրով նախատեսված օղուզական պետության՝ Սև ծովից մինչև Կասպից ծով ընկած տարածքում, այսպես կոչված, Մեծ Աղբբեջան նոր պետության ստեղծումը, որ պետք է կամրջեր թուրքական պետությունը Կովկասի և Միջին Ասիայի թրքախոս ժողովուրդների հետ, ինչը տեղավորվում էր Մեծ Թուրան ստեղծելու հեռահար ծրագրերի մեջ: Առաջնորդվելով ծավալապաշտական քաղաքականությամբ՝ Աղբբեջանի մուսավաթական կառավարությունը հավակնում էր բռնակալվել նաև պատմական Հայաստանի մի շարք տարածքներ, այդ թվում՝ հայոց հիմնավորը Արցախ աշխարհը: Եվ որքան ուժեղանում էին Աղբբեջանի իշխանությունների ճնշումներն ու բռնությունները, այնքան ավելի անկոտրում էին դառնում Արցախի հայության անկախ ու ազատ ապրելու և իր պատմությունը ինքնուրույն կերտելու կորովն ու կամքը: Ուստի, Աղբբեջանը, ի դեմս Չանգեզուր-Ղարաբաղի զենեթալ-նահանգապետ, հայատյաց խոսքով բեկ Սուլթանովի, նպատակադրվեց երիտթուրքերի ոճրագործ օրինակով ցեղասպանության ճանապարհով արագորեն ընկնել Լեռնային Ղարաբաղի հայության դիմադրությունը: 1919թ. հունիսի 4-5-ը Շուշիին մերձակա Ղայալիչեն գյուղի հայության բնաջնջումից հետո անպատիժ մնացած թուրք-մուսավաթականները 1920թ. մարտի 23-26-ը կազմակերպեցին նաև Շուշիի հայության զանգվածային ջարդը, որին զոհ գնաց ավելի քան 10 հազար հայ: Ոչնչացվեց մշակութային մի հսկայական ժառանգություն: Հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին արևմտահայերի բնաջնջումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում: Ուստի թուրք մուսավաթականների վարած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայության ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունը իր աշխարհագրական ընդգրկմամբ Կիլիկիայից մինչև Բաքու համաթուրքականության մեթոդական ծրագրի իրականացման հետևանքն է: Սակայն ի դերև եղան Աղբբեջանի ղեկավարության բոլոր ջանքերը ցեղասպան քաղաքականության միջոցով արցախահայերին արմատախիլ անել իրենց պատմական բնօրրանից: Արցախահայությունը զենքով դիմագրավեց իր անվտանգության վրա ծառայած սպառնալիքին: Այստեղ հետագա տարիներին ազգային-ազատագրական հուժկու պայքարում 1992թ. սեպտեմբերի 2-ին ծնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Լիախույս են, որ ներկայացվող զեկուցումներն իրենց գիտաքաղաքական առումով նպաստ կբերեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հատուցման գործընթացին:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

ԱՆՑՅԱԼՈՒՄ ՊԵՏԸ Է ՄԱ ԱՄԻՄԱՅՆ ԱՐՏԱԲԻՆ ՈՒԺԵՐԻՆ ՀԱՎԱՏԱԼՈՒ ԿԱՍ ԱՊԱՎԻՆԵԼՈՒ ԱՆՀՈՒՍԵՆ ԶԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատմության պարուրածն զարգացման օրինաչափությամբ անպատասխան մնացած հարցադրումները կրկին առաջադրվում են: Ցեղասպանությունների անպատժելիությունը, իրավաքաղաքական գնահատականն ուրանալը ճանապարհ են հարթում մարդկության դեմ նոր ոճրագործությունների իրագործման համար: Այսօրվա գիտագործնական համաժողովի զեկուցումները նպատակաուղղված են վեր հանելու հայոց մշակութային և լուսավորչական կենտրոնները մեկուսելու: Շուշիում 1920 թվականին թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանության քաղաքական դրդապատճառները, բուն ընթացքն ու հետևանքները, վերագնահատելու պատմական այդ իրողության էությունը:

1920 թվականի Շուշիի կոտորածն անպատիժ մնացած Թուրքիայի ցեղասպան վարքագծի շարունակությունն է, ծանր է երբևէ փոփոխություն չկրող ծեռազից, ցեղասպան վարքագծի՝ իր անստոմիական կառույցով, դրանից բխող բնազոյան մղումներով ու նկրտումներով, որն ըստ էության չի փոխվել և չի փոխվելու: Պարզապես պատմության դասերն ուսանելի են և հղումներ են տալիս այն մասին, որ հարևան Աղբբեջանի բարոյական ու գաղափարական գերակայությունների մակարդակը սկսվում է ավարտվում է ջարդարարական և զավթողական նկրտումներով:

1920 թվականի Շուշիի կոտորածի թեմայով բազմակողմանիորեն, համապարփակ պետք է գեներացվի աղբբեջանցիների ցեղասպան վարքագծի թեման: Միջազգային հանրության ուշադրությունը բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով պետք է սևեռվի այս հիմնահարցի վրա, իրավասու մարմինները պետք է դիմեն համապատասխան միջազգային աստիճաններ Աղբբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու պահանջատիրությամբ: Ազգային ճանապարհի պատմաքննական հայացքը թելադրում է թշնամու հետ հարաբերվել միմիայն ուժի լեզվով, և սա պետք է լինի մեր ազգային դիվանագիտության միջուկը: Աշխարհաքաղաքական ներկա իրավիճակում, դժբախտաբար, բարեկրթությունը, քաղաքակրթությունը, իրավապաշտության և օրինապահության թուլատրելի սահմանում լինելը այլևս վճռորոշ չեն:

Հարգարժան գիտաժողովականներ Այսօր հարյուրամյա հեռավորությունից մենք խնկարկում ենք Շուշիի անմեղ զոհերի հիշատակը մեր գիտական խոսքով, մեր պետականաշինությամբ, մեր հայրենիքի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը ամխոցելի պահելու ուխտյալ վճռականությամբ, մեր համազգային նպատակների կենսահաստատմամբ: Մենք այլևս հավաքական իմաստությամբ զորացած ժողովուրդ ենք, մեր կամքն անզիջում է, և անցյալում պետք է մնա միմիայն արտաքին ուժերին հավատալու կամ ապավինելու անհեռատես քաղաքականությունը:

Ողջունում և շնորհակալություն են հայտնում գիտաժողովի բոլոր մասնակիցներին: Հաջողություն են մաղթում ձեր աշխատանքներին:

Լուսինե ՂԱՐԱԲԱՆՅԱՆ
ԱՀ ԿԳՄ նախարար

ԵՐԲԵ ՎԵՐԱՂԱՐՁ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԴԵՊՈՒ ԱՆՑՅԱԼ

Մենք պարտավոր ենք այս քարոզչական պատերազմում հակահարված հասցնել մեր հարևաններին, առավել ևս այս պահին, երբ սահմանի վրա վիճակը սրված է: Մեզ մեղադրում են մի բանի մեջ, որով զբաղվել է Աղբբեջան կոչվող պետությունը շուրջ հարյուր տարի, ինչու չէ, նաև դրանից առաջ՝ 1905-1906թթ.՝ հայ-թաթարական կռիվների ժամանակ, իրենց դեմքը ցույց տվեցին, որը սկսվել է 1905թ. փետրվարի 6-ից Բաքվի կոտորածներով, և շուտով տարածվեցին Այսրկովկասի շրջաններ՝ Երևանի նահանգ, Չանգեզուրի հատված, Արցախ և այլուր: Այդ ցեղասպանական քաղաքականությունը Աղբբեջան կոչված պետության ստեղծման նախաշեմին կրկնվեց 1918թ. մարտ-մայիս ամիսներին Արեշի, Նուխիի շրջաններում, իսկ 1918թ. սեպտեմբերին թուրքական բանակը ներխուժեց Բաքու և կազմակերպեց Բաքվի սուսկայի կոտորածները: Այդ ցեղասպան քաղաքականությունը շարունակվեց արդեն Աղբբեջան պետության կողմից գեներալ-նահանգապետ խոսքով բեկ Սուլթանովի նշանակվելուց հետո՝ 1920թ. մարտին, հատկապես Շուշիում, որին բազմահազար հայեր զոհ գնացին, և այդ քաղաքականությունը շարունակվեց նաև խորհրդային տարիներին շատ անթելված ձևով՝ հայ բնակչությանը դուրս մղման ճանապարհով, երբ պարզվեց, որ 95 տոկոս հայություն ունեցող էքնիկական պատկերը աստիճանաբար փոխվեց, և Արցախյան շարժման նախաշեմին՝ 1988 թ. այն արդեն դարձել էր 74-75 տոկոս: Այնուհետև այն շարունակվեց խորհրդային Աղբբեջանի գոյության վերջին տարիներին. Սոււճայիթ, Կիրովաբադ, 1990թ. Բաքվի կոտորածներ: Այս քաղաքականությունը շարունակվում է մինչև հիմա. 2016թ. ապրիլ, երբ աղբբեջանական ներխուժման արդյունքում տեսանք, թե ինչ տեղի ունեցավ: Այս ամենի հանրագումարը կարող ենք ամփոփել հետևյալ կերպ. երբեք վերադարձ չի կարող լինել դեպի անցյալ: Աղբբեջանի այն ակնկալումները, սպասելիքները, թե ինչ-որ կարգավիճակով Արցախը կվերագրանա Աղբբեջանի կազմ, երբեք տեղի չի ունենա, որովհետև մենք՝ գիտական հատվածի աշխատողներս, շատ լավ գիտենք, որ դա միանշանակ ենթադրում է ցեղասպանություն, և այդ տարիների ընթացքում պատմական փորձը մեզ հուշում է, որ ամեն մի վերադարձ անցյալ ենթադրում է արցախահայության ցեղասպանություն: Մեր գիտաժողովի նպատակներից մեկն էլ այն է, որ համաշխարհային հանրությանը ցույց տանք իրականությունը և վերջում մեր հայտարարությունն ընդունենք, որ ցեղասպան երկրի հետ հայ ժողովուրդը այլևս անելիք չունի: Մենք մեր իրավունքները վաղուց հաստատել ենք մեր հաղթական զենքի միջոցով:

Աշոտ ՄԵԼԵՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պարմության
ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ՆԵՏԱՅԱՑ

ՇՈՒՇԻՆ՝ ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻ ՍԿԻՋԲ

Գիտաժողովի հիմնական նպատակը այն պետք է լինի, որ գնահատենք 100 տարի առաջ տեղի ունեցածը, փորձենք բացատրել պատմաբանները, հենահար նպատակները և համապատասխան գնահատականներ տալու հենքի վրա փորձենք դիմել միջազգային հանրությանը, որպեսզի ձեռնարկվեն մարդասպանների նկատմամբ համապատասխան իրավական միջոցներ, ու նաև ապահովվի հատուցում Ցեղասպանության կորուստների համար:

1920թ. մարտի 23-ին տեղի է ունեցել մի ահավոր սպանդ. 7000 հայկական տներ հրդեհել են, 35 հազար հայ բնակչության մի զգալի մասը ոչնչացվել է: Երևի մեր ժողովրդի բախտը մի փոքր բերել է այն պատճառով, որ այդ օրը Քարին տակի ծորում մառախուղ էր, որի ներքո ոմանք կարողացել են փրկվել: Ի դեպ, հայրս, որ նույնպես ծնվել է Շուշիում, 8 տարեկան էր, երբ սկսվել է այդ ամբողջը, տատս մի կերպ փրկել է երեխաներին՝ օգտվելով նույն այդ մառախուղի հնարավորությունից: Մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Առաքելյանը, որն այդ ժամանակ թեմական դպրոցում ուսուցիչ էր, անձամբ է պատմել, թե ինչ ստակալի վիճակում էր Շուշին այդ օրերին, և ինչպես է ժողովրդի մի մասը կարողացել փրկվել: Վաղարշ Վաղարշյանը, որը շուշեցի էր, իր հուշերում պատմում է, թե ինչպես են հորը՝ հացթուխ Բոգդանին, սպանել և գցել բակի ջրհորը: Դա թուրքի ձեռագիրն է: Ո՞րն է դրա պատճառը: Այն, որ այդ տարածքը, որը հայերին էր պատկանում, փորձեն զավթել: Թուրքական զավթողական քաղաքականության շարունակությունն էր հիմնական պատճառը: Սպասվում էր, որ մեկ ամիս հետո, ապրիլի 28-ին պետք է բուլշևիկյան կարգեր հաստատվեին Ադրբեջանում: Այդ պայմաններում զուցե դժվարանար այդ ձեռնարկը իրագործել, բայց Ղարաբաղը չէր մտնում կեղծ ստեղծված Ադրբեջան պետության կազմի մեջ, և նրանք հասկանում էին, որ եթե բաց թողնեն, Ղարաբաղը հետագայում իրենց ձեռքից կգնա, և խնդիր էին դրել ոչնչացնել բնակչության այդ մասին՝ հայերին, ինչպես

1915թ. Թուրքիայում, որպեսզի տարածքը կարողանան զավթել:

Ավերեցին Շուշին, թալանեցին, կոտորեցին հայերին, բայց իրենց գերնպատակը չիրագործվեց, որովհետև Ղարաբաղցիք ամուր են և մինչ այսօր պայքարում են իրենց երկրի անկախության, մայր Հայաստանին միանալու համար: Ղարաբաղցիների այդ պահանջը շատ բնական է, քանի որ, դեռ սկսած 5-րդ դարից, երբ Արշակունյաց թագավորությունը վերացավ, ստեղծվեց հայկական մի պետություն՝ Արցախ-Ուտիք՝ Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ, հետո դրան հաջորդեցին Խաչենի իշխանությունը, ապա՝ մելիքությունները: Այսինքն՝ մինչև 1813 թվականը կիսանկախ կերպով Արցախի բնակչությունը ապրում էր, գոյատևում, ստեղծում էր և չէր կարող հանդուրժել մտնելու մի հետամուտ թաթարական ազգի արհեստական ստեղծված պետության կազմի մեջ: Շատ լավ հասկանալով դա՝ ձեռնարկեցին այդ քստմնելի քայլը, այդ ցեղասպանական ոճրագործությունը, ու դա Ղարաբաղյան հիմնախնդրի սկիզբը դարձավ: Շուշիի ողբերգական իրադարձությունների 100-րդ տարելիցը նշելով՝ պիտի արձանագրենք, որ դա Ղարաբաղյան շարժման 100-ամյակն է, իսկ ավելի կոնկրետ՝ 102-րդ, քանզի այն սկսվել է 1918 թվականից: 1920-ին ուղղակի կուլմինացիոն մի կետ էր, որ թուրքերը և թաթարները միասին կարծում էին, թե խնդիրը կլուծեն: Բայց խնդիրը չկարողացան լուծել, որովհետև թեև Շուշին դատարկվեց (մի մասը փախավ հարևան գյուղեր, մի մասը՝ Հյուսիսային Կովկաս), բայց գյուղական բնակչությունը քիչ չէր, և պայքարը շարունակվեց: Ծիշտ է, միջանկյալ լուծում ստացավ. 1923թ. ստեղծվեց ինքնավար մարզ, իսկ հետո 88-ին նորից այդ շարժումը, որը միշտ էլ կար գաղտնի, արդեն արտահայտվեց բացահայտ, և 90-ական թթ. սկզբին ազատագրական պայքարով Արցախը կարողացավ նվաճել իր անկախությունը: Բայց այդ պայքարի սկիզբը եղել է 1918-20թթ.: Եվ Շուշիի այս ամբողջ միջադեպը պետք է դիտարկել այդ համատեքստում: Կարծում են՝ զեկուցումները

հենց այս տոնով էլ գնում են, և պատմության ինստիտուտը մշակել է մի շատ հիմնավոր և սուր տեքստ: Կարծում են՝ սա պետք է լինի այն արդյունքային փաստաթուղթը, որ մեր այս գիտաժողովը կընդունի: Մի անգամ էլ ընդգծել, որ Շուշիի ողբերգությանը երբեք այսպիսի մեծ անդրադարձ չի կատարվել, կարծում են՝ սա կստեղծի ավանդույթ այսուհետև և անդրադառնալու: Մեր հաջորդ խնդիրը կլինի այն, որ գնանք հետքերով, պահանջենք ցեղասպանության այդ ակտի հատուցում, դատապարտում միջազգային հանրության կողմից: Երևանում գործող Ցեղասպանության թանգարան-ինստիտուտում ստեղծենք մի առամծին սրահ՝ նվիրված Շուշիի ցեղասպանությանը: Եվ Ղարաբաղյան շարժումը շարունակենք անկախության համար, որովհետև այդ պայքարը չի ավարտվել: Մեր հարցադրումները պետք է կառուցենք այդ ոգով և անպայման հասցնենք միջազգային հանրության գիտակցությանը, որ սա նոր խնդիր չէ, սա տարածքային վեճ չէ, սա ազգային-ազատագրական պայքար է, ինքնորոշման պայքար, և այս խնդիրը մենք միշտ պետք է հրատապ պահենք:

Շուշին 19-րդ դարում խոշոր մշակութային կենտրոն էր Թիֆլիսից հետո, հայկական տարածքում՝ միակը: Այնտեղ են խաղացել Խանդանիրյան թատրոնը, իսկ մինչ այդ՝ թատերական խմբերի ձևով 19-րդ դարի մեր խոշոր դերասանները, այնտեղ է գործել ռեալական ուսումնարանը, որը տվել է աշխարհահռչակ գիտնականներ, խոշոր գործիչներ: Շուշիի ներդրումը հայ մշակութային, գիտական կյանքում վիթխարի է և չի կարելի երբևիցե հանդուրժել, որ Շուշիին նորից վիճակվի ճակատագիր, որն անընդունելի է, և երբեք էլ չպիտի լինի Ադրբեջանի կազմում, ինչպես և՛ ամբողջ Ղարաբաղը:

Յուրի ՍՈՒԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարուղար

ՕՍԻՊ ՄԱՆՂԵԼՅԱՆԸ՝ ՇՈՒՇԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Ես Ղարաբաղը տեսա լեռնային, Տեսա գիշատիչ Շուշի քաղաքը, Ուր ճաշակեցի սարսափներ մահի - Հոգուս խռովքին համանվազ: Քառասուն հազար մեռյալ լուսամուտ, Ակնախոռոչներ մութ, սնամեջ. Դառը տքմանքի բոժոժը հմուտ Թաղված էր այնտեղ՝ լեռների մեջ... [թարգմ.՝ Հրաչյա Բելեյրյանի]

Այսպես է ռուս գրող Օսիպ Մանդելշտամը «...Ֆայտոնչին» («...Фаянтошак») բանաստեղծու-

թյան մեջ նկարագրել Շուշին 1920թ. հայերի ջարդերից տարիներ անց: Օ. Մանդելշտամը կոմյունիստական շարժումի հետ Շուշիի ջարդերից 10 տարի անց այցելում է այդտեղ, որտեղ նույնիսկ տարիներ անց զգացվում էր մահվան շունչն ու կոտորածի պատկերը: «...Այդ տարիներին մենք ամեն քայլի տեսնում էինք մուսավաթականների ջարդերի հետքերը (Շուշին միայն արդեն բավ էր)...»,- գրել է Ն.Մանդելշտամը: Երանց հաջողվում է կայանատեղիում հանդիպել միակ կառավարիչին և փախչել այդ մահվան քաղաքից ու ամիսներ անց գրչին հանձնել Շուշիում հայերի ջարդերից մնացած ակնհայտ հետքերի ու ավերածությունների մասին իրենց վկայությունները:

Գիտաժողովում «Օսիպ Մանդելշտամի «Կառավար» ստեղծագործության բացասական կարծատիպերը» թեմայով ելույթ ունեցավ ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը: Իսկ գիտաժողովի գործընկերներից «Խաչմերուկ» ՀԿ նախագահ Վահան Բաբախանյանը փոխանցեց Վիկտոր Կրիվոպուսկովի խոսքն այն մասին, որ Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ռուսաստանյան միության կողմից պատրաստվել է Օ. Մանդելշտամի հուշարձանը, որը համավարակից հետո կբերվի և կկանգնեցվի Շուշիում:

ՇՈՒՇԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ԵՎԻՐՎԱԾ «ԱՐԲԵՋԱՆԻ ՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՎԱՐՔԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ)» ԹԵՄԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՅԱՆՑ ԳԻՏԱԾՈՂՈՎԻ (ՇՈՒՇԻ, 2020 Թ. ՀՈՒՆԻՍԻ 15-16) ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններում առայսօր միջազգայնորեն չի դատապարտվել, իսկ արյան ու ավերածությունների միջոցով ստեղծված այդ պետությունը պատասխանատվության չի ենթարկվել: Անպատեհիության զգացումը Ադրբեջանի դեկավարության ոճրագործ ձեռքերին ազատություն է տվել նորից նախնիներ նյութելու բնիկ ժողովուրդների դեմ, բարբարոսաբար ոչնչացնելու նրանց ստեղծած քաղաքակրթային արժեքները: Այսպես կոչված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կարծատն գոյությունն անհամեմատելիորեն հարուստ է պատերազմների սանձազերծմամբ, բռնություններով, ավազակային հարձակումներով ու կողոպուտներով, էթնիկական զտումներով և բնիկներին պատկանող պատմամարտարապետական կոթողների զանգվածային ոչնչա-

ցումով: Թուրքական սիլնների օգնությամբ ստեղծված այդ խամաճիկային պետությունն ինքնահռչակման օրից՝ 1918թ. մայիսի 27-ից ի վեր Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններում իրականացնում է պետական ահաբեկչության քաղաքականություն՝ դառնալով ցեղասպանության թուրքական քաղաքականության կույր գործիքը: Այդ քաղաքականության սահմանակցուցիչ դրսևորումները Այսրկովկասի ողջ տարածաշրջանի պատմության մռայլ էջերն են կազմում: Դրանցից հատկանշելի են Բաքվի 1918թ. և Շուշիի 1920թ. եղեռնագործությունները: Իր պատմական հայրենիքից հայ ազգաբնակչության բռնի տեղահանության քաղաքականության շուրջ 70-ամյա անպատիժ գործադրումն այսօր հայրենագրվել է Ադրբեջանում հնուց ի վեր ապրող կես միլիոնից ավելի հայերի, մարդկային ու մշակութային վիթխարի և անդառնալի կորուստների պատճառ դարձել: Բայց այդ ամենին քաղաքական

գնահատական չտալը, չդատապարտելը և հանցագործ Ադրբեջանին պատասխանատվության չենթարկելը հանգեցրել են նրան, որ այդ պետությունն այսօր դարձել է տարածաշրջանի ամենաագրեսիվ, սպառազինությունների մրցակցաբով և նոր պատերազմ սանձազերծելու մոլուցքով տառապող մի անկախատեսելի ու վտանգավոր կազմավորում, պատերազմի մշտական օջախ, որը սպառնում է հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգությանը, միջազգային կառույցների տնտեսական, քաղաքական և տարածաշրջանային այլ ծրագրերի իրականացմանը: Այդ սպառնալիքը հատկապես ակնհայտ է հայկական կողմի համար, քանզի տասնամյակների փորձը վերջինիս օգնում է ավելի լավ ճանաչելու եկվոր հարևանների խարդախությունները, կանխատեսելու նրանցից եկող վտանգը: Միաժամանակ դա Արցախի հայ ազգաբնակչությանն իրավունք է տալիս դիմելու զինված ինքնապաշտպանու-

ՈՒՆԵՆԱԿ ԱՆՎԱՍ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱՆԱԿ. ՍԱ Է ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԸ

Նախ իմ երախտագիտությունն են հայտնում այս գիտաժողովը նախաձեռնողներին, աջակիցներին և բոլոր մասնակիցներին: Բարի երթ են մարդուն ման կարևոր, խիստ պահանջված գիտաժողովին և հայցում Աստուծո հատուկ օրհնությունը և աղոթում են 100 տարի առաջ մեր անմեղ զոհերի համար:

1918թ. երիտթուրքերը իրենց մուսավաթական կուսակցության մասնաճյուղը ստեղծեցին Բաքվում, որը նույն ձեռագրով շարունակեց ցեղասպանությունը մինչև այսօր էլ (Տավուշում ոմբակոծվում են մեր խաղաղ բնակավայրերը): Այդ ձեռագիրը չի փոխվում: Դրա պատասխանը մեկն է՝ ունենալ անկախ պետականություն և կազմակերպված բանակ: Սա է մեր պաշտպանության ձևը և եղանակը, և ես հույս ունեմ, որ ձեր զեկուցումների շնորհիվ մենք կկարողանանք միջազգային ամենաբարձր ատյաններում ներկայացնել այս հարցը և վերջ տալ ցեղասպան այս քաղաքականությանը: Մարդկության դեմ մեղքը վաղեմության ժամկետ չունի: Բայց կա մի կարևոր հանգամանք. պետք է լինենք հետևողական, անընդհատ բախենք բոլոր դրոները բախենք, ինչպես որ Ավետարանում «Ամիրավ դատավորի» մասին առակում է ասվում. աղքատ կինը այնքան է գնում կաշառակեր դատավորի մոտ, որ նա վերջապես նրա հարցը լուծում է: Մենք չպիտի հոգնենք, անընդհատ բոլոր դռները պիտի բախենք, մինչև մեր հարցը հասնի միջազգային հանրությանը: Եվ դա կլինի մարդկության մեծ ներդրումը աշխարհի բոլոր մարդկանց համար: Մեր պայքարը միայն մեզ համար չէ, մարդկության համար է, աշխարհի բոլոր ազգերի համար է, որ մարդկությանը զերծ պահենք նոր ցեղասպանություններից՝ պատմական և մշակութային: Թող Աստված օրհնելով օրհնի, մենք կարողանանք մեր սուրբ նահատակների հիշատակով կասեցնել այդ ցեղասպան ձեռագիրը, որ այսօր Երդողանը և Ադրբեջանի իշխանությունը, սկսած Լիբիայից մինչև Չինաստան, փորձում են Հայաստանի, Վրաստանի, Արցախի վրայով անցկացնել պանթուրանիզմի իրենց կամուրջը: Չի հաջողվել: Չէր հաջողություն և Աստուծո օգնությունը:

Պարգև արքեպիսկոպոս ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Իմ օրագրից

1990Թ. ՀՈՒԼԻՍ

Ամեն անգամ թերթելով օրագրիս էջերը՝ սուգովում եմ մտորումներս մեջ: Ախր այսօր, մեր Շարժումից ավելի քան 30 տարի անց, հնարավոր էլ չէ կյանքը համեմատել 1990-ի հետ: Արցախը ծաղկում, բարգավաճում է: Նա օրինակելի է շատերի համար, նույնիսկ գերտերությունների, որոնք չեն համարձակվում ճանաչել այդ նոր ծնված փոքրիկ, բայց բազմակողմա-միտրեն կայացած պետությանը:

1.07.1990թ.: Մեզ մոտ շարունակում են մնալ ու ավելի սրվել լարված ու տագնապալի վիճակը, պոլյանիչկո-սաֆոնովյան դաժան ռեժիմը: Ամենամատանելիմ այն է, որ կազմկոմիտեի նախագահ Պոլյանիչկոն կարողացել է իր ենթակայության տակ առնել պարետատունը պարետի հետ միասին: Արդեն լուրեր են լսում, որ գեներալ-մայոր Սաֆոնովի ծննդյան օրվա կապակցությամբ «առատաձեռն» Պոլյանիչկոն որպես նվեր (կաշառք) նրա մատն է զգել 50 հազար ռուբլանոց ադամանդե մատանի, որի հետևանքով շրջանի պարետն ավելի է խստացրել իր հսկողությունը: Ահա թե ինչու ամեն առիթով հիշում եմ Յանիսի Պողոսյանի ասածը. «Արկաղի Վոլսկին մեզ համար է ծնվել»: Եվ իսկապես, մենք երանի ենք տալիս Յատուկ կառավարման կոմիտեի գործունեությանը, որ սերտ կապ ուներ թե՛ հասարակության և թե՛ մարզի ղեկավարության հետ: Նա մարզը համարյա լրիվությամբ թե՛ տնտեսապես և թե՛ քաղաքականապես անջատել էր Ադրբեջանից, և բյուջեն ֆինանսավորվում էր Մոսկվայից: Իսկ այսօր, չնայած ոչ ոք՝ ղեկավար թե շարքային, կազմկոմիտեին չի ենթարկվում, բայց կաշկանդվածությունն ու ընկճվածությունը զգացվում է ամեն օր: Լավ է, որ որոշ չափով կապ կա նաև Մայր Հայաստանի հետ, առանձնապես երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու հարցում: Շատ զգացված եմ, որ Հայաստանի ճամբարներում, որոնց թվում՝ Հանքավանի «Բազե» ճամբարում հանգստանում են նաև իմ աշակերտները: Այնպես որ, արցախցի որոշ դպրոցականներ որոշ ժամանակ չեն զգում պոլյանիչկո-սաֆոնովյան խիստ ռեժիմի ծանրությունը:

Այս օրերին հիմնականում օրերս անց են կացնում մեր տանը, մեր տան բակում: ՁԼՄ-ներից սպասվող կարոտը սրտունս, անչափ ցավ են զգում, որ Ադրբեջանցիները դարաչինների նման տարածվել են աշխարհով մեկ և իրենց սուտ տեղեկություններով բթացնում են մարդկանց: Այսպես, այս օրերին Լոնդոնի համալսարանին կից արևելյան և արևմտյան հետազոտությունների կենտրոնում տեղի է ունեցել «Անդրկովկասի հասարակությունը և նոր պատմության խնդիրները» թեմայով միջազգային կոնֆերանս, որտեղ Ադրբեջանական պատմիկությունն իր ճառախոսությամբ ջանում է ապացուցել, թե 1920թ. զարմանը Արցախի ապստամբությունը ճնշելու համար Ադրբեջանն իր ունեցած-չունեցած զորքերը նետել է Լեռնաստանի վրա: Բաքուն ու հանրապետության հյուսիսային մասը մնացել են անպաշտպան, և այդ պատճառով Ռուսաստանի 11-րդ բանակը առանց մի զնդակ արձակելու մտել է անտեր ու անպաշտպան երկիրը, նվաճել այն և հայտարարել խորհրդային: Այսպես հետո էլ այդ ճառախոսները առանց ամաչելու բարբաջում են, թե Ադրբեջանում կատարվում են դեմոկրատական (արյան մեջ) բնույթի փոփոխություններ, Ադրբեջանցիների մարդասիրական վարքագծի մասին

(ջարդերի ու սպանությունների միջոցով) և այլն: Այդ ճառախոսներից չի տարբերվում նաև Ադրբեջանի նախագահ Ա. Մուրթալիբովը, որը ԽՍՀՄ ժողդեպուտատների հետ միասին Հայաստանը լքած ադրբեջանցիների թիվը ներկայացնում է վերընթաց տեսքով՝ հասցնելով 300 000-ի և մոռանալով, որ համամիութենական «Սոյուզ» պարբերականի թղթակցի հետ հարցազրույցում նշել է 165 000 թիվը՝ ի տարբերություն 205 000 փախստականի, որ նշել է հենց ինքը՝ Մուրթալիբովը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում արտասանած իր ճառում: Իսկ ճիշտ փաստն այն է, որ 1979թ. մարդահամարի պաշտոնական տվյալներով Ադրբեջանում բնակվում էր 475, 5 հազար հայ, իսկ նույն ժամանակ Հայաստանում կար 160 881 ադրբեջանցի: Որտեղի՞ց են բերանբացները վերցրել 205 կամ 300 հազար թվերը:

15.07.1990թ.: Մոսկվայի Մանեֆի հրապարակում մայրաքաղաքի դեմոկրատական ուժերը միտինգ են կազմակերպել: Զգիտես որտեղից որտեղ, ի գարմանք շատերի, երևացել են ադրբեջանցի ցուցարարներ՝ ռուսերեն, անգլերեն և ադրբեջաներեն լոզունգներով, որոնցում հավասարապես զովաբանում են Բ. Ելցինին, Ռուսաստանին, միևնույն ժամանակ պահանջում ազատել Լեֆորտովի իրենց բանտարկյալ որդիներին: Ընթերցողին իրազեկեն, որ Լեֆորտովը ՊԿԿ-ի մոսկովյան քննչական մեկուսարան է, որտեղ գտնվում է 14 մարդ՝ ձերբակալված Բաբվի 1990թ. հունվարյան դեպքերի հետ կապված: Նրանց ներկայացված է մեղադրանք՝ որպես ազգամիջյան երկպառակությունների և զանգվածային անկարգությունների կազմակերպիչներ: Հիշեցնեն, որ Բաբվում համանման մեղադրանքով կալանված է 250 մարդ, որը, իմ կարծիքով, աչքակապություն է:

24.07.1990թ.: Դարձյալ շարունակվում է Պոլյանիչկո-Սաֆոնով երկյակի անտանելի ռեժիմը: Երբ աղջիկս փողոցից բերեց ԼԴԻՄ-ի բնակչությանը Ադրբեջանի պրեզիդենտ Ա. Մուրթալիբովի նամակը, որն անչափ ջղայնացած ընթերցեցի՝ մտածելով, որ դեռ երես էլ ունի դիմել մեզ: Ձարմանում եմ, մեր Շարժման երրորդ տարվա հինգերորդ ամիսն է, բայց մինչև օրս Ադրբեջանի պրեզիդենտ կոչվածը չի հասկացել կամ չի ուզում հասկանալ, որ Ադրբեջանի կամ ադրբեջանցի կոչեցյալների հետ որևէ հարաբերություն սկսելու համար բոլոր կանուրջներն այրված են: Զգիտես ինչ նյութից են ստեղծված այդ մարդիկ իրենց ղեկավարների հետ, որոնք մեր համեստ խնդրանքին, մեր արդար պահանջին պատասխանել են Սուևայիթի, Բաբվի, Գյանջայի և այլ շրջաններում բնակվող կես միլիոն հայերի ջարդերով, սպանողով ու թալանով: Եվ մեզմիջ համարժեք պատասխան չստանալով՝ այսօր առանց ամոք զգալու դիմում է ադրբեջանական և հայկական գյուղերի միջև հաշտության պայմանագիր կնքելու:

Մի հարցնող լինի, Խոջալուի հե՞տ պայմանագիր կնքել, որ արդեն երրորդ տարին է, որ նրա մոտով հայկական շունչ չի անցնում, թե՛ Շուշիի հետ, որտեղ այսօր մի հայ չի մնացել: Մի՞թե այս մարդը չի հասկանում, որ մենք արյուն թափող չենք, արյունը իրենք են թափում, քանի որ հայի արյան ծարավ են: Այնպես որ, մեր հարցի դրական լուծման հույսը սրտներումս՝ շարունակում ենք մաքառել:

Մալեկ ՇԱՐՆԱԶԱՐՅԱՆ

ՇՈՒՇԻ ԶԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՃԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր հասնելու համար հայկական կողմի անելիքները ևս շատ են, մասնավորապես որ ճշմարտությունը տեղ հասցնելու համար պահանջվում է երկարատև ու անդադար պայքար: Այս տեսակետից կարելի է հատկանշել նաև հասարակության ակտիվության գործոնը: Ցեղասպանություն վերապրած մեր հայրենակիցների սերունդների նպատակը ոչ միայն Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականության դատապարտումն է, այլև միջազգային հանրությունից, նախ և առաջ, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված պետություններից նույնն ակնկալելն ու պահանջելն է:

Այսպես կոչված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կողմից ծրագրված ու կազմակերպված Բաքու և Շուշի քաղաքների հայ բնակչության ջարդերը և Արցախի երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի հրկիզումը էթնիկական զտման ադրբեջանական քաղաքականության հերթական դրսևորումներն էին, ոչ միայն արմենոցիի թուրքական քաղաքականության շարունակությունը, այլ նաև ոտնձգություն ամբողջ մարդկության ու ժողովրդավարության դեմ: Երկու օր շարունակված միջազգային առցանց գիտաժողովի մասնակիցները դատապարտում են Ադրբեջանի ոճրագործությունները և վստահություն են հայտնում, որ միջազգային հանրության կողմից այդ երկրի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների շարունակվող քաղաքականության դատապարտումը կամ դրան համարժեք քաղաքական, իրավական զնախատական տալը կարող են դառնալ նման հակամարդկային դրսևորումների կանխարգելման ամենարդյունավետ միջոցը:

Ներկայիս Ադրբեջանը, լինելով այսպես կոչված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդը և օգտվելով անպատժելիությունից, որդեգրել է իր նախորդի ոճրագործ քաղաքականությունը: Դրա վկայությունն են հանդիսանում 1987-1991 թվականների Ադրբեջանի հայ ազգաբնակչության ջարդերը և բռնատեղահանությունները, ագրեսիայի նախաձեռնումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, իսկ ներկայումս՝ սահմաններ փակելով, հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտելով, խաղաղարար գործընթացին խոչընդոտելով պատերազմի ու սպառազինությունների մրցավազքի մշտական հրահրումը:

Թուրքիայի ու Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությունը վերապրածների սերունդները դատապարտում և անընդունելի են համարում քաղաքական հիմնախնդիրները բիրտ ուժի միջոցով լուծելու՝ այդ երկու կազմավորումների քաղաքական գիծը: Թեև մեր ժողովուրդը միշտ էլ կարծել է, թե միայն քաղաքակիրթ ճանապարհով կարելի է լուծել պետությունների միջև վիճահարույց հիմնախնդիրները, սակայն պատմությունը սովորեցնում է, որ ծառացած խնդիրները պետք է լուծել՝ ապավինելով սեփական ուժերին, մեր ազգի բազկի ու մտքի հավաքական զորությանը: Ուստի, Շուշիի հայերի հանդեպ եղեռնագործության 100-րդ և Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի տարածքում հայ ազգաբնակչության ցեղասպանության 105-րդ տարելիցներին հայ ժողովուրդը միջազգային հանրությունից ընդամենն ակնկալում է դատապարտել Ադրբեջանի՝ տասնամյակներ շարունակվող հակահայկական գործողությունները և բոլոր հնարավոր միջոցներով ու ազդեցության լծակներով այդ երկրի ակտորիտար իշխանություններին ետ պահել Այսրկովկասի անվտանգությանը մշտապես սպառնալու անմիտ մարտավարությունից: Կամ՝ գոնե համակողմանիորեն աջակցել Ադրբեջանի ագրեսիվությունը զսպելու կարևոր առաքելությունն արդեն տասնամյակ իրականացնող Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությանը և նրա փառապանծ Պաշտպանության բանակին:

Անթույլատրելի է աչք փակել նաև ամենաբարձր մակարդակով Նախիջևանում իրականացվող հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման վրա: Երբ ծայրահեղական ահաբեկիչները Մերձավոր Արևելքում զազանաբար ոչնչացնում են մշակութային համամարդկային արժեքները, իսկ պատմական Կոստանդնուպոլսում մզկիթի է վերածվում Սուրբ Սոֆիայի տաճարը, առավել քան զգացվում է Նախիջևանում ադրբեջանցիների կողմից հայկական բացառիկ խաչքարերի ջարդուփշուր անելու նախադեպը և վանդալիզմի մյուս գործողությունները դատապարտելու, ինչպես նաև Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Նախիջևանյան թեման շարունակությունն է Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականության մերկացման և Արցախի հետ սերտորեն առնչվում է ինչպես Ադրբեջանի հետ հակամարտության համատեքստում, այնպես էլ այն առումով, որ հենց Նախիջևանի ողբերգական ճակատագիրը մեզ Արցախի հայ ազգաբնակչությանը պարզելու պայքարի դրոշմ՝ Ադրբեջանի ոճրագործ քաղաքականությունից ինքնապաշտպանվելու նպատակով: 1920թ. մարտյան ողբերգությանը զոհ գնացին նաև ժամանակին Ազուլիսից Շուշի տեղափոխված մեր հայրենակիցները, ուստի Արցախի ոստանի ու Նախիջևանի կապը ոչ միայն պատմականորեն է, այլ նաև Ադրբեջանի նույն ոճրագործ քաղաքականությանը ենթարկվելու դժբախտությունն ունենալու տեսանկյունից:

Շուշիի մարտյան ողբերգության 100-րդ տարելիցին նվիրված միջազգային առցանց գիտաժողովում ներկայացված զեկուցումները նպատակ ունեն ևս մեկ անգամ բարձրաձայնել Արցախի երբեմնի ոստանում Ադրբեջանի կազմակերպած հայերի կոտորածների մասին, միջազգային հանրության ուշադրությունը սևեռել հիմնահարցի վրա և իրավասու մարմիններին ներկայացնել սահմանված ընթացակարգով համապատասխան միջազգային ատյաններ դիմելու և Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Շուշիում Ադրբեջանի կողմից կազմակերպված ոճրագործությունները հայ ազգաբնակչության նկատմամբ ցեղասպանության տասնամյակներ շարունակվող քաղաքականության հերթական դրսևորումն էին և բացահայտում են Ադրբեջանի ահաբեկչական, ագրեսիվ ու անմարդկային բնույթը:

Մեր օրերում, երբ տեղաբնիկների ցեղասպանության միջոցով ձևավորված Ադրբեջանի ղեկավարները բարձր ամբիոններից ճամարտակում են ժողովրդավարական արժեքների մասին, պետականորեն իրենց իսկ կազմակերպած ու իրագործած ոճրագործությունների, այդ թվում նաև ս. թ. հուլիսի 12-ին Տավուշի շրջանում ինքնիշխան Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը խախտելու նպատակով սադրիչ նախահարձակման համար ցինիկորեն մեղադրում դրանց զոհ գնացած ամենեղ հայերին, ավելի քան հրատապ է, մասնավորապես ներկայումս լայն թափ ստացած տեղեկատվական պատերազմի պայմաններում, անցյալի ողբերգական իրադարձությունների վերաիմաստավորումը, դրանց համարժեք զնախատական տալը և, դրանով իսկ Ադրբեջանին դիմակազերծ անելը:

ՕՐԿԱ ՊԱՏԱՆՋ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆՈՐ ՈՒՍՈՒՆԱԿԱՆՈՒՄ ԿԵՆՂԱՆԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ Է



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՍԿԶՐՈՒՄԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յուլիսի 15-ին և 16-ին ԱԶ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանը խորհրդակցություն է անցկացրել Ստեփանակերտում գործող մանկապարտեզների և հանրակրթական դպրոցների տնօրենների հետ: Մասնակցում էին նախարարության և քաղաքապետարանի համապատասխան ոլորտների պատասխանատուներ:

Օրակարգում սեպտեմբերի 1-ից կենդանի ուսումնական գործընթացի կազմակերպման հարցն էր: Նշենք, որ այդ թեմայով քննարկում կազմակերպվել է նաև ԱԶ Ազգային ժողովում, որտեղ պարզաբանումներ է տվել ԿԳՄ նախարարը:

Քանի որ նախարարի կարգավիճակով դա Լուսինե Ղարախանյանի առաջին հանդիպումն էր նախադպրոցական հիմնարկների և հանրակրթական դպրոցների տնօրենների հետ, նա հանդիպումը սկսեց աշխատանքային մի քանի սկզբունքների ներկայացմամբ, որոնք, որպես հաղորդագրություն, ավելի վաղ արել է ԱԶ նախագահ Արայիկ Յարոյանյանն իր մի խորհրդակցության ժամանակ (Նախագահի այդ ելույթը տպագրված է «Լուսարար»-ի հ. 16-ում):

Լ. Ղարախանյանը խորհրդակցությանը նպատակահարմար է գտել մեջբերել այդ սկզբունքներից մի քանիսը, որոնք ավելի սերտ են առնչվում կրթական համակարգին:

«Պաշտոնավարումը ծառայություն է ժողովրդին»: «Գործունեության ու ծառայության թափանցիկություն և մատչելիություն»:

Նախարարը նշեց, որ «Քովիդ-19»-ը փոխել է աշխարհն արմատական ձևով. այն դարձել է ավելի թափանցիկ. «Մենք պետք է աշխատենք, գործենք, մտածենք ըստ էության, մտածենք ճիշտ, գործենք ճիշտ, 7D ձևաչափով արդեն ամեն ինչ երևում է ամեն տեղից: Արդեն հնարավոր չէ կուլիսային, ոչ թափանցիկ մոտեցումներ ցուցաբերել: Նրա ցանկությունն այն է, որ բոլորն աշխատեն թափանցիկ՝ օնլայն աշխատանքի ռեժիմում, բոլորը տեսնեն, թե ով ինչով է զբաղված: Օրինակ, չի կարելի, որ հոգեբանի հաստիքը զբաղեցնի հայոց լեզվի և գրականության ուսուցիչը, եթե կան հոգեբանի որակավորում ունեցող մասնագետներ: Կամ չի կարելի, որ մանկապարտեզի տնօրենը պահեստապետի գործառույթներն էլ վերցնի իր վրա: Նախարարի դիտարկումով՝ որոշ տնօրենների համար մանկապարտեզը մոնոպոլիայի նման մի բան է և դիտվում է իբրև սեփական տարածք:

«Պետական միջոցների հանդեպ առավելագույն սրտացավություն»:

«Եթե մենք ունենք հանրային, պետական մտածողություն և գիտենք ստորադասել սեփականը պետականին, նշանակում է մենք մեր տեղում ենք և բարոյական դաշտում խնդիրներ չունենք», - նախարարը այն համոզմանն է, որ տնօրենները սոցիալական, հանրային պատասխանատվության այդ բարձր զգացումն ունեն, բայց այն պետք է զարգացվի

և որակական նոր մակարդակի հասցվի: Այլ կերպ չի էլ կարելի. սահմանում իրենց կյանքը չեն խնայում մեր զինվորները, թիկունքում պետք է համարժեք պահվածք լինի. «Մենք պետք է աշխատենք մաքուր դաշտում, մաքուր սկզբունքներով. դրանից շահում են մեր երեխաները, հասարակությունը, ընդհանուր առմամբ՝ երկիրը»:

«Արժանիքահեն մարդկային ռեսուրսների կառավարում»:

Արժանիքահեն, արժեքների վրա հենված մոտեցումը, պաշտոնական բարեվարքությունը շատ կարևոր են: Որտեղ կա կոնֆլիկտ, ուրեմն առաջնորդն իր տեղում չէ. այս կարծիքին է Լ. Ղարախանյանը:

«Այն բարձունքը, որով դուք վարում եք կրթական քաղաքականությունը, թույլ չի տալիս, որ կենցաղային հարաբերությունները մտնեն դպրոց: Յարենասիրությունը հուզական, պաթոսական նախադասությունները չեն, հայրենասիրությունը պատասխանատվության բարձր զգացումն է, որն սկսվում է պետության ինչչից, նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Մենք շատ դժվարությունների միջով ենք անցել, և հիմա տարածաշրջանային այս խոցելի ժամանակահատվածում իրոք մեզ պետք են հանրային և ազգային լավ արժեքներ կրող ղեկավարներ», - պնդում է նախարարը:

Նրա խոսքով՝ շատ տնօրեններ մասնագիտական բարեվարքության որոշ կանոններ անտեսում են և հարաբերություններ են ծշտում աշխատողի հետ: Այսպես, լինում են դեպքեր, երբ ղեկավարը պարզապես հետապնդում է շատ լավ որակներ ունեցող, կրեստիվ, բազմակողմանի զարգացած աշխատողին: Այդպիսի երևույթներ չի կարելի: Տնօրենը պետք է հենվի աշխատողի արժանիքների վրա և նեղ անձնական խնդիրները, հետաքրքրությունները, համակրանքները մի կողմ թողնի: Ներդաշնակ միջավայր ստեղծելը տնօրենի մենաշնորհն է: Եթե ներդաշնակ չէ միջավայրը, խնդիրը պետք է փնտրել առաջնորդի ներսում, նշանակում է՝ ինչ-որ բան այնպես չէ կամ կառավարման որակների մեջ կամ մեկ այլ տեղ:

Ըստ նախարարի, հասարակությունը լակնուսի թուղթ է, որն արտադրում է ուսումնական հաստատություններում կատարվող ամեն բան: Ղեկավարն իր բարեվարքությունն անմիջապես փոխանցում է դաստիարակներին, ուսուցիչներին, վերջիններս էլ՝ սաներին:

«Ոչ մեկը թող չփորձի զանգել մեզ և պարտադրել որև բան: Այդ մասին ես հայտարարել եմ նաև Աժ-ում: Արգելվում է, որ նախարարության աշխատողները, անձնական շահերից ելնելով, մուտք գործեն դպրոց, մանկապարտեզ: Ես օրինակ, իրավունք չունեմ տնօրենի լիազորությունները վերցնել ինձ վրա: Մենք մեր սկզբունքներն ենք պահում, դուք՝ ձերը, և արդյունքում շահում է երկիրը, հանրային բարոյականությունը, որը դարձել է շատ խոցելի: Մտավորականին հարիր չէ նյութապաշտ լինելը: Լուսավորությանը և կրթությանը ծառայելը առաքելություն է: Շքեղության մեջ չէ հաճույքը», - իր միտքն է հաստատում նախարարը:

Կա այսպիսի արատավոր երևույթ. երեխաներից զումարներ են հավաքում մանկապարտեզի կամ դպրոցի համար ինչ - որ գույք ձեռք բերելու: Դա անթույլատրելի է: Մի բանի կարիք լինելու դեպքում նախարարը հորդորեց դիմել վերադասին, տվյալ դեպքում՝ կրթության բաժնին, չլուծվելու դեպքում՝ նախարարություն, որը հովանավորներ կզտնի հարցը

լուծելու: Լ. Ղարախանյանը տնօրեններին հորդորեց կենցաղային հարաբերությունների մեջ չմտնել ծնողների հետ. «Պահեք ձեր հետաքրքիր հեռավորությունը: Եղեք ձեր բարձրության վրա, չափի զգացողության մեջ, որպեսզի այդ գրավչությունը, հմայքը, մտավորականի կենցաղը ոչ մի բան չխաթարի»: Ավելորդ է ասել, որ կրթադաստիարակչական հաստատություններում արգելվում է ապրանքների վաճառքը: «Դպրոցը կրթադաստիարակչական հաստատություն է, այնտեղ միայն բարոյական արժեքներ են սերմանվում: Եթե լսենք, թե խախտվում են այս սկզբունքները, պատասխանատվությունը կրելու է տնօրենը: Ուզում եմ, որ մեր տնօրենները լինեն այնպիսին, որպիսին հուշում է ազգային գաղափարախոսության տրամաբանությունը, ինչպիսին հուշում են բարձր արժեքները: Համոզված եմ, որ հենց այդպիսին եք, բայց ուզում եմ, որ ավելի լավը լինեք»:

ՏՆՕՐԵՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍԿԵՆ



Լ. Ղարախանյանի դիտարկմամբ՝ կրթական հաստատությունների շատ ղեկավարներ լիովին չեն տիրապետում ոլորտի օրենսդրական դաշտին: Խոսքը «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երեխաների իրավունքների պաշտպանության մասին» և կրթությանն առնչվող այլ օրենքների մասին է: Նախարարը նկատեց, որ տարիներ շարունակ մեր տնօրենները չեն վերապատրաստվել, ինչը բացասական երևույթ է. «Եթե մասնագետը անընդհատ մնում է նույն տեղում, դա չի կարող անդրադառնալ նրա ստեղծարարության, ինտելեկտուալ մակարդակի, նրա անձնային կարողությունների վրա և կարող է պայմաններ ստեղծել նրա լծացման համար»: Առաջիկայում նախատեսվում է դպրոցի և մանկապարտեզի տնօրենների վերապատրաստում:

ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄՊԱՍՎՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒ

Սեպտեմբերի 1-ից մանկապարտեզները կսկսեն գործել: Դրանք զինված կլինեն համավարակից խուսափելու անհրաժեշտ միջոցներով: Նախարարությունը կտրամադրի ջերմաչափող էլեկտրոնային սարքեր, ախտահանող լամպեր և այլ նյութեր: Նախարարը տեղեկացմամբ՝ աշխատում են նախադպրոցական ավագ խմբի երեխաների ուսուցումը կազմակերպել դպրոցից դուրս, ասել է թե՛ 1-6 տարեկան բոլոր երեխաները մնան մանկապարտեզում: Նախատեսվում է դա իրականացնել 2022-2023 ուսումնական տարում:

Եկող տարվանից երեխաների ընդունելությունը մանկապարտեզ կկազմակերպվի առցանց: Սա համակարգը կփրկի բավական խնդիրներից՝ զանգերից, հովանավորչությունից, ինչ-ինչ ռիսկերից:

Նախարարն առաջիկայում Նախագահին կներկայացնի մանկապարտեզի տնօրենների և դաստիարակների աշխատավարձերի բարձրացման հարցը: 2021թ. որոշակի փոփոխություն կլինի նրանց աշխատավարձում:

Նախադպրոցական բաժինը ներկայումս զբաղված է մեթոդական նյութերի թղթապանակի պատրաստմամբ. «Տալու ենք ձեզ ինչ պետք է և հետո ձեզնից ակնկալենք ինչ-որ բան»:

Մանկապարտեզներում կներդրվի հոգեբանի հաստիքը, քանի որ ներառական կրթությունը մտնում է մանկապարտեզ: «Նախադպրոցական կրթության մասին» մեր օրենքի ամենաառանցքային հարցերից մեկը սա է: Նախարարն զգուշացրեց, որ չի թույլատրվի տնօրենների կողմից կամայական ծրագրերի մտցում մանկապարտեզ: Ըստ նրա՝ որպես մասնագետի, երեխայի ուղեղի վրա սահմանված ինֆորմացիայից ավելը կարող է բերել վտանգավոր հետևանքների: Լինելու է հստակ չափորոշիչ:

Գործելու է հանձնախումբ՝ կազմված տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներից, որը դիտարկումներ է ամելու մանկապարտեզներում: Արդյունքները թույլ են տալու պատկերացում կազմել մանկապարտեզների գործունեության մասին և վերացնել խոցելի տեղերը, լրացնել բացերը.

«Մենք պետք է աշխատենք մաքուր դաշտում, մաքուր սկզբունքներով. դրանից շահում են մեր երեխաները, հասարակությունը, ընդհանուր առմամբ՝ երկիրը»:

Նախադպրոցական կրթության բաժնի պետ Էլմիրա Յովհաննիսյանը ներկայացրեց, թե մեթոդական աջակցության առումով ինչ է արվում:

Ասաց, որ ծրագրերն ամբողջովին փոխվում են, նախկինները շատ ծանրաբեռնված էին և երեխաների համար մատչելի չէին: Էլեկտրոնային թղթապանակ են ստեղծում տնօրենների, մեթոդիստների, դաստիարակների համար, որոնք կարող են օգտվել օնլայն եղանակով:

Մշակվում է մանկապարտեզների 5-ամյա ռազմավարական ծրագիր, որը նախատեսում է նախադպրոցական ցանցի ընդլայնում:

Մանկապարտեզ ընդունելությունը մեկ մահճակալ-մեկ երեխա սկզբունքով է արվելու: Իրագրվեց, թե քաղաքի մանկապարտեզներից յուրաքանչյուրը կունկրետ քանի երեխա պետք է ընդունի: Լ. Ղարախանյանը հորդորեց պահպանել արդարության սկզբունքները, որ բողոքի առիթ չլինի:

Մանկապարտեզների գծով նախարարի խորհրդակցական Իրինա Գրիգորյանը անդրադարձավ հաստիքացուցակին: Նրանում ընդգրկված մարդկանց գործառույթային պարտականությունները պետք է համապատասխանեն կատարած աշխատանքին: Դիտարկումները ցույց են տվել, որ շատ դեպքերում դա ձևական բնույթ է կրում: Տնօրենները պետք է իմանան, որ յուրաքանչյուր աշխատողի պարտականությունները հարկ է, որ նշված լինեն պայմանագրում ու մտցված նրա անձնական գործի մեջ:

Խորհրդակցությանը ելույթ ունեցան տնօրենները:

ՕՐԿԱ ՊԱՆԱՆՁ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒՄ ԿԵՆՂԱՆԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է

Կ Ա Ր Գ «ԻՎԱՆ ԱՌԱՅԱՆ ԿՐԹԱԹՈՆԱԿ»-Ի ՏՐԱՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ



1. Սույն կարգով սահմանվում են Արցախի պետական համալսարանի և Հայաստանի Հանրապետության բակալավրի կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներին «Իվան Աբայան կրթաթոշակ» (այսուհետ՝ կրթաթոշակ) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Կրթաթոշակը տրամադրվում է Արցախի պետական համալսարանի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերի՝ սկսած 2020-2021 ուսումնական տարվանից, «Ֆիզիկա» և «Քիմիա» մասնագիտությունների այն ուսանողներին, որոնք հաշվառված են Արցախի Հանրապետությունում:

3. Առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթաթոշակը տրամադրվում է բոլոր ուսանողներին:

4. Հաջորդ կիսամյակներում կրթաթոշակ կշարունակեն ստանալ այն ուսանողները, որոնք իրենց ուսումնառության ողջ ընթացքում ցուցաբերել են լավ և գերազանց առաջադիմություն:

5. Կրթաթոշակը տրամադրվում է յուրաքանչյուր ամիս՝ վեց ամիս ժամկետով, անկանխիկ (կրթաթոշակին արժանացած ուսանողներին տրամադրվում է պլաստիկ բանկային քարտ), որի չափը կազմում է ամսական 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

6. Կրթաթոշակի տրամադրման գումարները գոյանալու են նվիրաբերությունների հիման վրա՝ փոխանցվելով Արցախի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշիվ:

7. Կրթաթոշակի արժանացած ուսանողը կարող է օգտվել այլ տեսակի կրթաթոշակներից:

8. Սույն կարգին համապատասխան՝ կրթաթոշակ ստացողները պարտավոր են մասնակցել նախարարության կողմից անցկացվող բոլոր միջոցառումներին (օլիմպիադաներ, սեմինարներ, գիտաժողովներ, կոնֆերանսներ և այլն):

9. Կրթաթոշակից օգտվելու համար սահմանված ժամկետներում ուսանողները Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարություն են ներկայացնում՝

- 1) դիմում,
 - 2) երաշխավորագիր ֆակուլտետից,
 - 3) առաջադիմության թերթիկ կամ ստուգաթղթային գրքույկի պատճենը,
 - 4) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,
 - 5) երկու լուսանկար:
- Կրթաթոշակի վճարումը կարող է դադարեցվել՝
- 1) համալսարանից ուսանողի հեռացման դեպքում,
 - 2) մասնագիտությունը փոխելու դեպքում,
 - 3) ակադեմիական արձակուրդի դեպքում (ակադեմիական արձակուրդից վերադառնալու ժամանակ կրթաթոշակի իրավունքը կվերականգնվի):

Կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա կիսամյակի սկզբում: Ուսանողը զրկվում է մշակույթի կրթաթոշակից, եթե ուսումնական տարվա կիսամյակի ավարտին չի համապատասխանում սույն կարգի 4-րդ կետով սահմանված չափանիշներին:

Կրթաթոշակին արժանացած ուսանողների անվանացուցակը տեղադրվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կայքում:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ 5 ԳՊՐՈՆՑԵՐՈՒՄ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հակառակ ԱԺ որոշ պատգամավորների այն տեսակետի, որ մարտից հետո՝ համավարակի պայմաններում, մեր կրթությունը ծախսողվել է, ԱԶ ԿԳՄ նախարարը հաստատակամորեն պնդում է, որ դա այդպես չէ: Պարզապես ունեցել ենք թերություններ: Որոշ տեղերում եղել է անտարբերություն ուսուցիչների, ծնողների, կրթության տարբեր շահառուների կողմից: Եղել է որոշ անհետևողականություն: Բայց ընդհանուր առմամբ, մեր դպրոցներն այդ քննությունն անցան: Նա օրինակ բերեց Մարտունու շրջանը, որի որոշ գյուղական դպրոցներ ավելի փայլուն ձևով են արձագանքել համավարակի պայմաններում կրթության հարցերին, քան մայրաքաղաքի լավագույն համարվող որոշ դպրոցներ: Նրանք ստեղծել են classroom հարթակը, որով Մարտունու կրթության բաժնի վարիչը կարողացել է վերահսկել ողջ գործընթացը: Եղել է հատուկ դասացուցակ, որից չեն շեղվել, և ոչ թե ինչպես որոշ դեպքերում Ստեփանակերտում էր, երբ ուսուցիչը վայրերով հաղորդում էր, որ հյուրեր ունի, և դասը հետաձգվում է որոշ ժամանակով:

Նախարարը տեղեկացրեց, որ սեպտեմբերի 1-ից եթե հանկարծ իրավիճակն այնպիսին լինի, որ անցնեն առցանց ուսուցման (Պլան Բ-ի տարբերակն էլ է մշակվել), խստիվ բացառելու են Viber, Vosap, Messenger կապերով դաս վարելը, ինչպես նաև տնային աշխատանքները նկարելով ուղարկելն ու պատասխաններ ստանալը: Լինելու է միայն Zoom հարթակը: Այդ կապակցությամբ Լ. Ղարախանյանը տեղեկացրեց, թե ինչ քայլեր է արել նախարարությունը դպրոցները աշակերտներին համապատասխան գործիքներով ապահովելու գործում: Նախարարությունը ձգտում է, որ չունենան առանց գործիքի դպրոց կամ աշակերտ: Մինչև օգոստոսի առաջին շաբաթը պետք է լուծված լինեն այս հարցերը:

Առաջին հերթին պետք է ձեռնարկեն վերապատրաստումներ, որպեսզի բո-

լոր ուսուցիչները տիրապետեն Zoom հարթակին: Սեպտեմբերի 1-ին չպետք է Zoom-ին չտիրապետող ուսուցիչ լինի: Նախարարության տեսուչ Քրիստինե Իսրայելյանն այս հարցում կաջակցի նրանց: Քաշաթաղի շրջանում վերապատրաստումները կարվեն «Քան» ակադեմիայի կողմից:

Իրականում համավարակը մարտահրավեր չէ, այն ստեղծում է այնպիսի շատ լավ հնարավորություններ, զարգացման լայն հնարավորություններ: Ստրատեգիական զարգաց-

վակնել հավաստագիր ունեցող և չափորոշիչներին համապատասխանող անձինք: Մեր խնդիրն այսօրվա դրությամբ այն է, որ չունենք հավատարմագրված տնօրենների թեկնածուներ: Այդ նպատակով դասընթացներ ԱՀ-ում չեն անցկացվել: Դրանց կարող են մասնակցել ոչ միայն գործող տնօրենները, այլև անձինք, ովքեր հավակնում են այդ պաշտոնին: Հիմա մեր առաջնահերթ խնդիրն այն է, որ փուլ առ փուլ իրականացվեն նման դասընթացներ: Նրա տեղեկացմամբ՝



ման հրաշալի հնարավորություններ են ստեղծվել հատկապես բուհական կրթության համար: Այն ընդհանրապես խնդիրներ չի ունենա Zoom-ով դաս վարելու: Բայց հանրակրթությունն ուրիշ է, հատկապես՝ տարրական օղակում, որտեղ 100 տոկոսյա կենդանա Zoom-ով դաս է անցկացվելու, ինչ պայմաններ էլ որ լինեն: Դպրոցներին տրվելու են ջերմաչափող սարքեր, ախտահանող նյութեր, որ նրանք պատրաստ լինեն համավարակի պայմաններում ճիշտ աշխատելու:

Առաջիկա մի քանի փոփոխությունների մասին խորհրդակցության մասնակիցներին որոշ մանրամասներ ներկայացրեց ԿԳՄ նորանշանակ փոխնախարար Դիմա Առստամյանը:

Նրա խոսքով՝ քանի որ Արցախի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության հետ մույն կրթական դաշտում է, ոլորտը պետք է լինի համաքայլ:

ՀՀ-ում արդեն երեք տարի է, ինչ անցկացվում է տնօրենների մրցույթ, որին նախորդում են համապատասխան դասընթացներ: ԱՀ-ում մույնպես նախատեսվում է մույնը, պարզաբանեց փոխնախարարը:

«Կրթության մասին» նոր օրենքով դպրոցի տնօրենի պաշտոնին կարող են հա-

մարը: ՀՀ-ում առցանց ընթացում են կրթական չափորոշիչների նախագծի քննարկումները, դրանք ուժի մեջ կմտնեն 2022-2023 ուստարվանից: Նախարարը հորդորեց ակտիվորեն մասնակցել այդ քննարկումներին, իսկ առաջիկայում նաև Արցախում կկազմակերպվի ՀՀ ԿԳՄ փոխնախարար Ժաննա Անդրեասյանի մասնակցությամբ:

Անդրադառնալով առաջին դասարանցիների ընդունելությանը՝ նախարարն ասաց, որ այն լինելու է առցանց, իսկ նախադպրոցական ավագ խմբի ընդունելությունը դպրոց դեռ կլինի նախկին ձևով, ծնողի հայեցողությամբ: Սակայն նա պետք է հաշվի առնի, որ առաջին դասարանը երեխան շարունակելու է առցանց ընդունելությամբ՝ ըստ բնակության վայրի:

Օրակարգում է հ. 10 դպրոցի հիմնանորոգման հարցը, որն ավարտելուց հետո կթեթևանա քաղաքի ծանրաբեռնված դպրոցների վիճակը (շատ հաճախ մարդիկ տուրք են տալիս դպրոցի արտաքին տեսքին):

Իր նկատառումները ներկայացրեց Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի վարիչ Թերեզա Կարախանյանը: Նա տեղեկացրեց, որ ուսուցիչների 80 տոկոսը տիրապետում է Zoom ծրագրին: Եվ հորդորեց տնօրեններին, որ առցանց գործիքների կարիք ունեցողների մասին բաժին ներկայացվող տեղեկատվությունը կատարվի ամենայն բարեխղճությամբ: Կարևորը ոչ թե շահառուի անորակ աշխատելը: Մինչև առաջին կիսամյակի ավարտը, տնօրեններն այդ մասին թող տեղեկացնեն ուսուցիչներին: Կվերականգնվեն տարվա լավագույնների մրցույթները, կներդրվեն ուսուցիչներին խրախուսելու շատ մեխանիզմներ: Օրակարգում է 22 ժամ դրույթաչափը 18 դարձնելու հարցը:

Ուսուցիչների ատեստավորումն ըստ ցանկության կներդրվի նաև Արցախի կրթական համակարգում, հարկավ, մանկավարժների հետ քննարկելուց հետո: Հաշվի կառնվեն նրանց մոտեցումները, տեղական առանձնահատկությունները. ամեն ինչ կարվի, որ ուսուցիչների համար լավ լինի, վստահեցրեց նախարարը:

Նոր ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու առնչությամբ ԱՀ ԿԳՄ նախարար Լ. Ղարախանյանը հուլիսի 24-ին նաև առցանց ասուլիս է տվել:

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

ՀԱՅԵՐԸ ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՐԸ ԱԶԳ

(Սկզբը՝ նախորդ համարում)

Նիկոլայ ՅՈՒՅԱՆՆԻՍՅԱՆ Պարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Կիլիկիայի հայոց թագավորության զինանշանը՝ կարմիր առյուծով

Ֆաթիմյան խալիֆայություն: Բաղր Գամալ ալ-Արմանին: Ֆաթիմյան խալիֆայությունը պատմության մեջ հայտնվեց 909թ., որը ստացավ Ֆաթիմյան անվանակոչումը Մուհամմադ մարգարեի դստեր՝ Ֆաթիմայի անունից: Ֆաթիմյան խալիֆայությունը հաստատվեց Յուսուֆային Աֆրիկայում և նրա կենտրոնը դարձավ Եգիպտոսը: Նրան միացվեցին Իֆրիկիայի, Ալժիրը, Մադրիդը, Սիրիան, Արաբիան, Իրաքի որոշ շրջաններ, Յիզաբ Սեբաստիոն և Մադրիդը: Դա դարձավ մի կայսրություն, որը ձգվում էր Ատլանտյան օվկիանոսից մինչև Կարմիր ծով: Ֆաթիմյան խալիֆաները խաղաղ դարձան էթիոպական տարբեր խմբերից կազմավորված իրենց զվարդիայի, առաջին հերթին՝ թուրքերի ձեռքում: Ֆաթիմյան խալիֆայի՝ Մուսթաֆայի զինված ուժերը և թիկնապահ զորքերը կազմված էին բերբերների, սուլանցիների և թուրքերի զուսմարտակներից:

Նրանք ոչ միայն հաշտ չէին, այլև բացահայտ թշնամանք էին տածում միմյանց նկատմամբ: Անելանելի դրության մեջ հայտնված խալիֆա ալ-Մուսթաֆայի 1073թ. հարկադրված դիմեց Ալրի կառավարիչ հայազգի Բաղր ալ-Գամալ ալ-Արմանին օգնությանը՝ հրավիրելով նրան և նրա հայկական զորքերը Կահիրե՝ անհնազանդ թուրքական զվարդիականների սանձահարելու և երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Բաղր ալ-Արմանին ընդունեց խալիֆայի հրավերը և հայերից կազմված իր քսանհազարանոց զորքով 1074թ. մտավ Կահիրե: Նա շատ արագ և փայլուն կերպով իրականացրեց իր առաքելությունը, ջախջախեց թուրքական զորքերին, պատժեց նրանց հրամանատարներին և նրանց հետ համագործակցած երգիպատական պաշտոնյաներին:

Բաղր ալ-Արմանին և նրա քսան հազարանոց հայոց զորքը Մերձավոր Արևելքում էր հայտնվել Սասունից:

Ալ-Մուսթաֆայի Բաղր ալ-Արմանին օժտեց ամենալայն պետական և ռազմական լիազորություններով: Նա նշանակվեց վա-

զիր և խալիֆայական զորքերի ընդհանուր հրամանատար, ինչպես նաև իսլամական միսոներական կորպուսի ղեկավար: Նրա ձեռքում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը, և նա 20 տարի՝ 1074-1094թթ.՝ մինչև իր մահը եղավ երկրի փաստական և անսահմանափակ իշխողը: Նա կարողացավ երկիրը դուրս բերել քառասյին վիճակից, հաստատել օրինականություն և նոր շունչ փչել հոգեվարքի մեջ հայտնված Ֆաթիմյան խալիֆայությանը:

Նրա մահից հետո, որը տեղի ունեցավ 1094թ., խալիֆա Մուսթաֆայի վազիրի և զորքերի հրամանատար նշանակեց Բաղր Գամալ ալ-Արմանին որդուն, հայազգի Մելիք ալ-Աֆդալին, որը հայտնի էր նաև Շահնշահ անունով: Նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ բարձրագույն իշխանությունը և դարձավ Ֆաթիմյան խալիֆայության իրական կառավարող՝ ձեռնարկեց դարձնելու խալիֆայի պաշտոնը:

Այսպիսով, մոտ կես դար Ֆաթիմյան խալիֆայության փաստացի կառավարողները եղան երկու հայազգի ակամավոր պետական, քաղաքական, ռազմական գործիչներ՝ հայր և որդի Բաղր Գամալ ալ-Արմանին և Աֆդալ Շահնշահը, որոնք անջնջելի հետք են թողել Ֆաթիմյան խալիֆայության, ի մասնավոր՝ Եգիպտոսի պատմության մեջ: Նրանց կառավարման տարիներին Եգիպտոսը դարձավ օրինակելի երկիր, զարգացած պետություն, որին նախանձով էին նայում հարևան երկրները: Նրանց դերը հենց այդպես է գնահատվում պատմագրության մեջ:

Յետագայում ես, հատկապես XIX դարի երկրորդ կեսերին, հայ պետական և քաղաքական գործիչներն անջնջելի հետք են թողել Եգիպտոսի պատմության մեջ: Բավական է նշել, որ XIX դարի 80-ականներին Եգիպտոսի առաջին վարչապետը եղել է Նուբար Նուբարյանը, որն անգնահատելի դեր է խաղացել Եգիպտոսի ակախության և ինքնության պահպանման գործում: Բացի դրանից, դարձյալ XIX դարում հայերը բազմիցս զբաղեցրել են Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի պաշտոնը և կարելու դեր խաղացել կառավարական համակարգի այլ բնագավառներում:



Միքայել Լոռիս Մելիքով, Ռուսաստանի վարչապետ և դիկտատոր

Կիլիկիայի հայկական թագավորությունը: Ռուբինյաններ և Յեթունյաններ:

1045թ., Բագրատունիների անկումից հետո, սկսվեց հայերի արտագաղթը, այդ թվում և Կիլի-

կիա: Արտագաղթողների մեջ էին Բագրատունիների շառավիղ Ռուբինյանները, որոնցից ամենաաչքի ընկնողը Ռուբեն իշխանն էր: Նա Բագրատունիների վերջին թագավոր Գագիկ II-ի մերձավորներից էր: Ռուբեն իշխանը 1080թ. Կիլիկիայում հիմնեց հայկական պետություն, որը սկզբում իշխանապետություն էր, իսկ 1198թ. վերածվեց թագավորության և անվանակոչվեց Կիլիկիայի հայկական թագավորություն: Նրա առաջին թագավորը եղավ Լեւոն II Մեծագործ Ռուբինյանը: Յայոց կաթողիկոսի նստավայրը տեղափոխվում է Կիլիկիա և հաստատվում Յեթունյա քաղաքում:

Կիլիկիայի հայկական պետությունը գոյություն է ունեցել նրա համար շատ բարդ միջազգային իրադրության պայմաններում: Նա շրջապատված էր տարբեր պետություններով, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր տիրանալ Կիլիկիային: Դրանց մեջ էին Բյուզանդական կայսրությունը, Ռումի կամ Իկոնիայի Սելջուկյան սուլթանությունը, Յեթունյա պալը, մոնղոլները և Եգիպտական մամլուքները: Կիլիկիայի հայ թագավորները ստիպված էին մեծ խիզախություն և դիվանագիտական բարձր հմտություն ցուցաբերել հայկական պետական նավի համար անվտանգ նավարկություն ապահովելու համար: Եվ, ի պատիվ նրանց, երկար ժամանակ հիմնականում հաջողվում էր լուծել այդ խնդիրը, որի փայլուն ապացույցն է Կիլիկիայի հայկական պետության մոտ երեքարյա գոյությունը (1080-1375թթ.):

1226թ. գահը Ռուբինյաններից անցավ Յեթունյաններին: Յարաբերությունները Եգիպտոսի և Կիլիկյան Յայաստանի միջև այդ շրջանում և հետագա տարիներին լարվում են: Եգիպտական մամլուքները ներխուժում են Կիլիկիա, գրավում Դաշտային Կիլիկիան, իսկ 1375թ. համառ դիմադրությունից հետո գրավեցին Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաք Սիսը:

Այդ թվականը համարվում է Կիլիկիայի հայկական թագավորության անկման տարեթիվը:

Յայազգի Միքայել Լոռիս-Մելիքովը Ռուսաստանի վարչապետ, դիկտատոր: Յայերը XIX դարում ազդեցիկ դիրքեր են ունեցել ցարական Ռուսաստանում, երբ ռուսական ցար Ալեքսանդր II-ի կայսրության ներքին գործերի նախարար նշանակեց Ռուսաստանի պետական Դումայի անդամ հայազգի գորապետ, գեներալ Միքայել Լոռիս-Մելիքովին՝ օժտելով նրան բացառիկ իշխանություն: Նա փաստորեն դարձավ Ռուսաստանի վարչապետ դիկտատոր (1880-1881թթ.), կայսրության երկրորդ դեմքը՝ ցարից հետո: Լոռիս-Մելիքովը ցարին է ներկայացնում վարչական և տնտեսական վերափոխումների մի ընդարձակ ծրագիր, ըստ որի, ցարական Ռուսաստանը ինքնակալ միապետությունից վերածվում էր սահմանադրական միապետության: Ցարը հավանություն է տալիս Լոռիս-Մելիքովի այդ ծրագրին և նույնիսկ 1881թ. մարտի 13-ին ստորագրում համապատասխան հրամանագիր (указ), այսինքն՝ միայն մի քայլ էր մնացել Ցարական Ռուսաստանը

սահմանադրական միապետության վերածվելու համար, սակայն նույն օրը՝ 1881թ. մարտի 13-ին, Ալեքսանդր II-ը ահաբեկչության զոհ դարձավ: Նրան հաջորդած Ալեքսանդր III-ը չեղյալ հայտարարեց իր հոր բարեփոխումների վերաբերյալ բոլոր հրամանները, իսկ զորապետ Լոռիս-Մելիքովը հեռացավ քաղաքական ասպարեզից ու ընդհանրապես Ռուսաստանից և բնակություն հաստատեց Ֆրանսիայում, Նիցցա քաղաքում: Նա մահացել է 1888թ. և թաղվել Թբիլիսիում, հայկական գերեզմանոցում:

Յայերի նշանակալի դերը շահական Իրանի պետական և քաղաքական կյանքում:

Բացառիկ է եղել հատկապես Եփրեմ խանի (Դավթյան) դերակատարումը Իրանի 1905-1911թթ. Սահմանադրական հեղափոխության կազմակերպման, ղեկավարման և Իրանի շահի տապալման գործում: Եփրեմ խանը եղել է իրանական հակաշահական ուժերի գլխավոր կազմակերպիչը և ղեկավարը: Այդ ուժերի ճնշման տակ Իրանի շահ Մոհամեդ Ալին հրատարակեց սահմանադրություն մտցնելու հրովարտակ: Բայց դա լույս խորամանկ քայլ էր: 1908թ. հունիսին շահը հեղաշրջում կատարեց և ցրեց մեջլիսը՝ պառլամենտը: 1909թ. հուլիսին Գիլանի ֆիդայիները, հայ կամավորները և սահմանադրականները Եփրեմ խանի և Ռեշտի նահանգապետ Սիփահդարի ղեկավարությամբ, բախտիրները՝ Սարդար Ասադի գլխավորությամբ արշավեցին Թեհրան, գրավեցին այն և զահընկեց արին շահին: Եփրեմ խանը նշանակվեց Թեհրանի ոստիկանապետ: Յայերը ստեղծեցին ժամանակավոր կառավարություն: Եփրեմ խանը նշանակվեց Իրանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, դիկտատոր, որը վերականգնեց սահմանադրությունը: Շարունակելով պայքարը՝ հեղափոխական ջոկատները, հայ կամավորներն ու ֆիդայիները Եփրեմ խանի հրամանատարությամբ հակահարված տվեցին շահին և նրան օգնության հասած եղբորը և կանխեցին միապետության վերականգնումը: Եփրեմ խանի հեղինակությունը շատ բարձր էր, նրան համարում էին Իրանի հերոս և տաղանդավոր զորավար: Ընդհանրապես այդ ժամանակ շատ բարձր էր իրանահայերի հեղինակությունը: Իրանի ակամավոր պատմաբան Էբրահիմ Սաֆայի վկայությամբ՝ Իրանական հեղափոխության 24 նշանավոր գործիչներից 16-ը հայեր էին:

Յավրը, Եփրեմ խանը սպանվեց 1912թ. մայիսի 6-ին Յամահանի շրջանում տեղի ունեցած մարտերում: Նրա մարմինը հանգչում է Թեհրանի հայկական Յայկազյան դպրոցի բակում: Իրանական հեղափոխության ակտիվ մասնակիցներից էր նաև հայ ֆիդայի Քեռիմ՝ Արշակ Գաֆայանը և ուրիշներ:

Մասնագետների կարծիքով Իրանական հեղափոխությունը XX դարի սկզբին առաջին հեղափոխությունն էր Արևելքում: Նա Իրանի բազմադարյան պատմության մեջ ամենակարեւոր իրադարձություններից մեկն էր, որը

խոշոր հետք է թողել Իրանի պատմության մեջ:

Իրանական հեղափոխությունը իր հետեւանքներն ունեցավ նաև հայության համար: Շնորհիվ իրանական հեղափոխության, հայերն ընտրվեցին տեղական ինքնավարական մարմիններում՝ էնջումեններում և իրավունք ստացան երկու պատգամավոր ունենալ Իրանի մեջլիսում: Այդ իրավունքը մինչև օրս պահպանվում է, և հայերը երկու դեպուտատներ ունեն իրանական մեջլիսում. մեկը Յուսուֆային Իրանի, իսկ մյուսը՝ Յարավային Իրանի հայության կողմից: Դրանով իսկ իրանահայերը պահպանում են իրենց պետութենաստեղծ գործունեությունը Իրանում: Շատ մեծ է կարեւոր է եղել Սիրզա Մելքում խանի դիվանագիտական գործունեությունը՝ բարձր դիրքեր գրավելով այդ ոլորտում: Նա եղել է Իրանի դեսպանը Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, պարսկական դեսպանատան խորհրդական Ֆրանսիայում, Պարսկաստանի դեսպանորդ Յեթունյա: Նա Իրանն արժանապատվորեն ներկայացրել է միջազգային համաժողովներում, ինչպես Բեռլինի կոնգրեսը (1878թ.), որտեղ նա պաշտպանել է Պարսկաստանի շահերն ընդդեմ Թուրքիայի և այլն:

Սիրզա Մելքում խանը մահացել է 1908թ.՝ խոշոր հետք թողնելով Պարսկաստանի քաղաքական, դիվանագիտական և գի-



տական-գրական կյանքում: «Լեւոն թագավոր հայոց», ուկերթում՝ Կիլիկիայի զինանշանով Լիբանանահայերի ներդրումը Լիբանանի անկախ պետության ստեղծման և պահպանման գործում:

Այն տարածքը, որ կազմում է ժամանակակից Լիբանանը, յուրահատուկ կարգավիճակ ունեւ Օսմանյան կայսրության կազմում: 1861թ. ընդունված Օրգանական ստատուտի համաձայն՝ ստեղծվել էր Լեռնալիբանանի ինքնավար մարզը՝ մութասառիֆությունը, որը կառավարում էր օսմանյան սուլթանի կողմից նշանակվող կաթոլիկ քրիստոնյա մութասառիֆը՝ կառավարիչը:

Առաջին մութասառիֆ եղավ հայազգի Կարապետ Արթին Դաուդյանը: Այդ կարգավիճակը պահպանվեց մինչև 1914թ., երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Օսմանյան կառավարությունը խախտեց Օրգանական ստատուտը և իր գործերը մտցրեց Լեռնալիբանան պաշտոնանկ անելով Լեռնալիբանանի վերջին քրիստոնյա մութասառիֆ հայազգի Յովհաննես Կույունջյանին: Լիբանանն ընկավ աներեւակայելի ծանր դրության մեջ:

ԳՐԱՐՇԱԿ

«ԿԱՐՂԱ, ԱՅ ԻՄ ԽԵՆՈՔ ՄԱՆՈՒԿ...»

Տարիներ առաջ մաթեմատիկայի մեր լավագույն մասնագետներից մեկի հետ զրույցի ժամանակ, երբ հարցրի, թե ինչով է բացատրում դպրոցում բնագիտական առարկաների ցածր մակարդակը, նա պատասխանեց, որ երեխաները հիմա քիչ են գիրք ընթերցում: Ու պարզաբանեց. ընթերցանությունը զարգացնում է մարդու մտածողությունը, լավացնում է ուղեղի աշխատանքը: Եվ գրքից հետո նալն իր բացասական ազդեցությունն է թողել:

Թվային տեխնոլոգիաների զարգացումը, մասնավորապես համացանցի մուտքը մեր կյանք նկատելիորեն նվազեցրեց մարդկանց հետաքրքրությունը տպագիր գրքի հանդեպ: Ամբողջ աշխարհում էր դա այդպես: Բայց բարեբախտաբար դա մի կարճ ակիբ էր: Հայաստանի հրատարակիչները փաստում են, որ հիմա ԱՄՆ-ում, Եվրոպայում մարդիկ առաջնահերթությունը տալիս են տպագիր գրքին, և Հայաստանում նույնպես գիրք ընթերցելը դառնում է արդիական:

Արցախն էլ այս գործընթացից դուրս չմնաց: Վերջին տարիներին գրադարանները սկսել էին աշխուժանալ: Դա չէր նշանակում, անշուշտ, թե նոր սերունդը հափշտակված է ընթերցանությամբ, ինչպես խորհրդային ժամանակներում էր, երբ դպրոցականներն ամառային արձակուրդի օրերին իրենց լավագույն հանգիստը համարում էին գիրք ընթերցելը: Բայց բոլոր դեպքերում հին, բարի ավանդույթները որոշակի շարունակություն ունենին:

Արցախում նոր տիպի կորոնավիրուսի համավարակը կանխարգելելու նպատակով երկու ամսով փակվել էին գրադարանները: Շուրջ երեք շաբաթ է, ինչ դրանք վերաբացվել են: Ճիշտ է, աշխատում են ոչ լրիվ օրվա ռեժիմով՝ պահպանելով համավարակի չտարածման կանոնները, բայց, ինչպես վկայում են գրադարանավարները, բավարարում են ընթերցողական քաղցը:

Դրանում համոզվելու համար բավական է կարճատև շրջայց կատարել Ստեփանակերտի գրադարաններում:

Մուրացանի անվան քաղաքային գրադարանը մի քիչ ավելի ուշ է վերաբացվել: Ընթերցողների ակտիվությամբ միշտ աչքի ընկնող այս օջախը, տնօրեն Մարիա Խաչատրյանի փաստամբ, դեռ չի հասել հաճախելիության իր պիկին, բայց համոզված է, որ դա չի ուշանա: Երջակա խանութների աշխատողների վկայությամբ՝ ընթերցողները հաճախում են գրադարանի փակցված է ըստ դասարանների ամառային ընթերցանության ծրագրային գրքերի ցանկը: Հաճախորդներից ոմանք պարզապես ասում են դասարանը, և գրադարանի աշխատողները համապատասխան գրքերը մատուցում են: Մանկական բաժինը սպասարկող Կարինե Հարությունյանն ասաց, որ ծրագրով նախատեսված բոլոր գրքերն ունեն, սակայն ցանկացողներն ավելի շատ են: Ոչ մեկը, սակայն, առանց գրքի չի հեռանում. նրանց ոչ պակաս հետաքրքիր ուրիշ գրքեր են առաջարկում:

տողների վկայությամբ՝ ընթերցողները հաճախ էին գալիս հարցնում, թե երբ կբացվի գրադարանը:

Թունանյանի անվան մանկական գրադարանն այս օրերին երեխաների սիրելի վայրերից մեկն է: Ասենք ինչ՞ ու միայն երեխաների: Նրանք գալիս են ծնողների հետ, իսկ շատ դեպքերում էլ՝ միայն ծնողներն են գալիս երե-



խաների համար գրքեր վերցնելու: Գրադարանի տեսանելի տեղում խոշոր տառերով փակցված է ըստ դասարանների ամառային ընթերցանության ծրագրային գրքերի ցանկը: Հաճախորդներից ոմանք պարզապես ասում են դասարանը, և գրադարանի աշխատողները համապատասխան գրքերը մատուցում են: Մանկական բաժինը սպասարկող Կարինե Հարությունյանն ասաց, որ ծրագրով նախատեսված բոլոր գրքերն ունեն, սակայն ցանկացողներն ավելի շատ են: Ոչ մեկը, սակայն, առանց գրքի չի հեռանում. նրանց ոչ պակաս հետաքրքիր ուրիշ գրքեր են առաջարկում:



կում: Երեխաները նախընտրում են թարմ, նկարազարդ գրքերը:

Միջին տարիքի բաժինը սպասարկող գրադարանավար Հասմիկ Աղաբեկյանն ասաց, որ ընթերցողներից ոմանք հեռախոսով են տեղեկանում գրքի առկայության մասին, անգամ հերթագրվում են: Կան գրքեր, որ գրադարակ չեն հասնում, սեղանին էլ չեն մնում. հենց հանձնում են, անմիջապես վերցնող լինում է: Այդպիսին է, օրինակ, Բակունցը: Նրա նկատմամբ պահանջարկը շատ մեծ է: Մեր այդտեղ գտնվելու պահին էլ ծնողը Բակունցի պատմվածքներն էր ուզում, բայց գիրքը գրադարանում էր: Նա իր հեռախոսահամարը թողեց և խնդրեց, որ գիրքը հանձնելուն պես իրեն տեղեկացնեն: Ասացի, որ Բակունցի ստեղծագործությունների էլեկտրոնային տարբերակը կա, կարող է այդպես կարդալ, բայց չհամաձայնվեց, ասաց, որ երեխայի աչքերը հոգնում են այդպես, նա էլ է նախընտրում տպագիր գիրքը:

Գրադարանավարներից տեղեկա-



ցանք, որ օրական 10-15 նոր ընթերցող են ունենում, հենրին չեն էլ հաշվում: Այդ պահին մտավ մի աղջնակ մայրիկի հետ: Առաջին անգամ էր այցելում: Մինչ մայրը ծրագրային գրքերն էր թվարկում, աղջիկը թույլտվություն խնդրեց մտնել գրապահոց և մոտիկից տեսնել գրքերը: Գրադարանի տնօրեն Նաիրա Աղաջանյանը կամացուկ ասաց՝ տեսեք, ուղիղ գնալու է դեպի նկարազարդ գրքերը: Այդպես էլ եղավ: Տնօրենն ասաց, որ գրքային ֆոնդն անըն-

հատ թարմացնում են: Նվիրատվությունից բացի տարվա նախատեսված գումարի սահմանում ամեն ամիս 30-40 հազար դրամի նոր հրատարակած նկարազարդ գրքեր են ձեռք բերում: Մի կես ժամի չափ գրադարանում էինք, և այդ ընթացքում հաճախորդների հոսք կար, նույնիսկ եղավ մի պահ, որ հերթ գոյացավ:

Մերոպ Մաշտոցի անվան հանրապետական գրադարանում էլ նույն պատկերն էր: Այստեղ դպրոցականներից բացի հանդիպեցինք նաև մեծահասակների: Արկարի Խաչատրյանը, 56 տարեկան, գրադարանի հին ընթերցողներից է: Օրը չի պատկերացնում առանց գրքի: Մի քանի գիրք էր բերել հանձնելու և մի քանիսն էլ վերցրեց, որպեսզի 10 օր հերթի: Ասաց, որ իրեն ավելի շատ հետաքրքրում են հայ ազգի մասին գրքերը. «Անցած անգամ «Վաչագան Բարեպաշտ»-ն են տարել, «Վարդանանք»-ը, կարելի է ասել, առաջին տողից մինչև վերջին տողը անգիր գիտեմ, երևի մի հարյուր անգամ ընթերցած կլինեմ»:

Այդտեղ գտնվող երկու աղջիկներից մեկը՝ 9-րդ դասարանի Ալեքսանդրան, խոստովանեց, որ մինչև վերջին ժամանակներս ինչքան գիրք է ձեռք բերել, մինչև վերջ չի ընթերցել: Հիմա հետաքրքրություն է առաջացել գրքի նկատմամբ: Ուզում էր Հոմերոս կարդալ: Իսկ ֆիզմաթի Սոֆյան, որը պատրաստվում է ճարտարապետ դառնալ, հաճույքով ընթերցում է ծրագրային գրքերը: Արդեն վերջացրել է «Վարդանանք»-ը, «Գևորգ Մարգարեանին», «Այրած և չայրած տարիներ»-ը, հաստատեց, որ ընթերցանությունն իրեն օգնում է ավելի լավ հասկանալ ֆիզիկան, մաթեմատիկան:

Իմ գործընկերներից մեկն ասաց, որ իր դուստրը, որին առաջ մի կերպ էր համոզում գիրքը ձեռք բերել, կորոնավիրուսի այս շրջանում մի առանձին սեր է սկսել տածել գեղարվեստական գրքի նկատմամբ: Առանց իր հորդորի ժամերով գիրք է ընթերցում:

Բոլոր գրադարաններում էլ փաստեցին, որ գնալով գրքի նկատմամբ հետաքրքրությունն աճում է, իսկ վերջերս ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարության հայտարարած «Արցախը կարդում է» ֆլեշմոբը մի յուրահատուկ գրքարշավ է ստեղծել ընթերցողների շրջանում:

Գիրք ընթերցելը դասական մշակույթ է, իսկ դասականը միշտ մնայուն է:

ՀԱՅԵՐԸ ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՐԾ ԱԶԳ

7 Լիբանանի ազատագրումը օսմանյան լծից ավարտվեց 1918թ. աշնանը, որն իրագործվեց անգլիական զորքերի և արաբական ապստամբ բանակի միջոցով, որոնք մի շարք ճակատամարտերում պարտության մատնեցին թուրքական բանակներին:

Դաշնակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի Գերագույն խորհուրդների 1920 թվականի որոշումով Լիբանանի կառավարման մանդատը տրվեց Ֆրանսիային: Դա առաջ բերեց լիբանանցիների դժգոհությունը և ծայր առան հակաֆրանսիական ելույթներ, որի արդյունքում, ի վերջո, 1943թ. նոյեմբերի 8-ին վերացվեց ֆրանսիական մանդատը: Այդ օրը պատմության մեջ մտել է որպես ֆրանսիական մանդատի վերացման, Լիբանանի անկախության և ինքնիշխանության հաստատման օր: Լիբանանի առաջին պրեզիդենտը ընտրվեց Բիշարա ալ-Խուրիին, իսկ Ռիյադ Սուլիբ գլխավորեց անկախ Լիբանանի առաջին կառավարությունը: 1946թ. դեկտեմբերին ֆրանսիական վերջին զինվոր

ըր հեռացավ Լիբանանից#:

Լիբանանի պետական կառուցվածքի հիմքում դրվեց կոնֆեսիոնալիզմի՝ կրոնա-դավանական սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի, Լիբանանի կրոնա-դավանական համայնքներ ճանաչվեցին վեց համայնքներ՝ քրիստոնյա մարոնիների, դրուզների, հայերի, մուսուլման սուննիների, շիաների և քրիստոնյա-ուղղափառների համայնքները: Հայերի համայնքը 1970-ական թվականներին կազմում էր մոտ 250 հազար և թվաքանակով զիջում էր շիա, մարոնի և սուննի համայնքներին, և մոտավորապես հավասար էր դրուզ ու քրիստոնյա-ուղղափառ համայնքներին:

Հայերը տեղաբաշխված են Լիբանանի տարբեր շրջաններում, սակայն նրանց հիմնական մասը կենտրոնացված է Բեյրութ մայրաքաղաքում: Մայրաքաղաքն ունի թաղամասեր, որոնք բնակեցված են հայերով, ինչպես Բուրջ Համուդը, Խալիլ Բադավիին, Նոր Հաճընը, Աշրաֆին, Հայաշենը, Անթիլիասի շրջանը, Զալքան և այլն: Զգալի թվով հա-

յեր բնակվում են Ջահլեում, Սայդայում, Տրիպոլիում Ալեյում, Բիբլոսում, Ջունիում, Շուֆի, Մեթնի, և Քեսրվանի և այլ շրջաններում:

Լիբանանահայության մոտ 47 տոկոսը գրադված է արդյունաբերության ոլորտում, ֆաբրիկաներում, գործարաններում, շինարարության մեջ, պետական ձեռնարկություններում և այլն, 45 տոկոսը առևտրի և սպասարկման ոլորտում, 2 տոկոսը՝ գյուղատնտեսության մեջ, 2 տոկոսն էլ կազմում է մտավորականությունը՝ ուսուցիչներ, գրողներ, բժիշկներ, նկարիչներ, երաժիշտներ, 4 տոկոսն էլ պատկանում է արդյունաբերական և առևտրա-ֆինանսական վերնախավին:

Բոլորի կողմից ընդունված է, որ մեծ է հայ համայնքի ներդրումը Լիբանանի առաջընթացի մեջ, և նա խաղում է մշակակալի դեր արդի Լիբանանի տնտեսական կյանքում: Մոտավոր հաշվարկներով, քաղաքացիական պատերազմին նախորդած տարիներին հայկական մեծահարուստներին պատկանում էր Լիբանանի խոշոր արդ-

յունաբերական ձեռնարկությունների 18 եւ միջին ու մանր արդյունաբերական ձեռնարկությունների 43 տոկոսը, իսկ երկրի ներմուծման հայ կապիտալի բաժինը կազմել է 10 տոկոս: 60-ական թվականներին Լիբանանի խոշոր արդյունաբերության մեջ ներդրված 375 մլն լիբանանյան լիրայից 125 մլն լիրան կամ 33 տոկոսը պատկանում էր հայ արդյունաբերական կապիտալին:

Մեծ է նաև հայերի դերակատարումը Լիբանանի պետական-քաղաքական և հասարակական կյանքում: Այդ տեսանկյունից արժանի է հատուկ և բարձր գնահատականի այն կարևոր դերակատարումը, այն մեծ կշիռը, որ ունի հայ համայնքը Լիբանանի քաղաքական և հասարակական կյանքում՝ որպես կրոնա-դավանաբային համայնք: Այդ հիմքի վրա յուրահատուկ է նրա գործունեությունը լիբանանյան պետականության գարգացման և ամրապնդման ոլորտում: Հայ համայնքը լիբանանյան պառլամենտում ունի դեպուտատական 6 տեղ, որը փոքր թիվ է: Բացի այդ, Լիբանանում գործող բավական

մին բարդ ընտրական համակարգի հետեւանքով 21 դեպուտատի ճակատագիրը եւս զգալիորեն կախված է հայ համայնքի դիրքորոշումից: Այսպիսով, հայ համայնքը որոշիչ ազդեցություն ունի լիբանանյան պառլամենտի մեկ քառորդի՝ 26 դեպուտատների ընտրության հարցում:

Հարկ է նշել եւս մեկ կարևոր հանգամանք: Լիբանանում գործող օրենքների համաձայն՝ Հայ համայնքին պատկանում է մինիստրական երկու պորտֆել: Կառավարության այդ երկու անդամները որպես կանոն ակտիվ գործունեություն են ծավալում Լիբանանի ներքին և արտաքին քաղաքականության հարցերում: Եվ վերջապես, ակտիվ են նաև հայ քաղաքական կուսակցությունները՝ Հայ Դեմոկրատական Դաշնակցությունը, Ռամկավար Ազատական կուսակցությունը և Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը:

Այսպիսին է հայերի պետութեամաստեղծ ֆեմոնենի պատկերը, որն իր անալոգիան եւ զուգահեռները չունի:

ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁ

ԽՄԲԱՅԻՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

EDCAMP ARMENIA 2020 ՈՒՐԻՂ ԵԹԵՐ ԴԻՏՈՒՄՆԵՐԸ

Կրթական ռեֆորմ՝ 84,000
Ներառական կրթություն՝ 55,000
Նախադպրոց. քննարկում՝ 19,000
Միջազգային խոսակալ՝ 10,000



Edcamp Armenia 2020 հանրակրթական համաժողովը Պարտիզմա կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպվել է սույն թվականի հունիսի 22-27-ը: Ունեցել է հազարավոր մասնակիցներ՝ կրթության փորձագետներ, ուսուցիչներ, հոգեբաններ, լրագրողներ, դասախոսներ, տեսուչներ և դպրոցի տնօրեններ Չայաստանից, Արցախից և արտերկրից:

Միջոցառման կարգախոսն էր՝ «Ուսուցիչը կարևոր է: Ուսուցումը՝ էական»: Շուրջ 100 խոսնակներ, օգտվելով Zoom առցանց հարթակի ընձեռած հնարավորություններից, ներկայացրել են կրթությանն առնչվող բազմաթիվ թեմաներ, քննարկվել են հրատապ խնդիրներ, առաջադրվել ժամանակակից մանկավարժության պահանջներին համապատասխան տեսակետներ: Համաժողովին իրենց հետաքրքիր ծրագրերն ու հետազոտություններն են ներկայացրել նաև միջազգային կրթական հայտնի փորձագետներ Դիլան Ուիլյամսը, Նորբերտ Պաբլերը, Պասի Սալբերգը, Մայքլ Յանգը, Գուրդա Տիրեն, որոնց առցանց քննարկումներին յուրաքանչյուր օր միացել է շուրջ 3000 մասնակից:

Իսկ մասնակցային դպրոցին, կրթության ներառականությանը վերաբերող ոլորտային քննարկումները և ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարեփոխումների հետ կապված քննարկումները համակողմանիորեն ներկայացրին կրթության ոլորտի կարևոր ծրագրեր և զարգացման միտումներ:

Նման միջոցառումները հնարավորություն են ընձեռում ձեռք բերելու փորձ, ինքնավստահություն, հմտություններ, մոտիվացիա...

Edcamp Armenia 2020 համաժողովի շրջանակներում մենք՝ արցախցի խոսնակներս, ներկայացրել ենք «Խմբային աշխատանքների կազմակերպման ձևերն ու նպատակները» թեման, որի հիմնական դրույթները և ձևակերպումները մեր սեփական փորձառության ընդհանրացումներն են:

Խմբային աշխատանքի մեթոդը իր կիրառման տարբեր դրսևորումներով հանրածանոթ է բոլորիս. ընտրել ենք այս թեման հենց այն պատճառով, որ մեր փորձառությունն ու հետազոտության արդյունքները ներկայացնենք և հավաստենք նշված մեթոդի կիրառման արդյունավետությունը, թերությունները, ցանկալի վերջնարդյունք ունենալու համար որոշ հիմնարար սկզբունքների կարևորությունը:

Ամբողջացնելու համար նշված թեմայի վերաբերյալ առանցքային հիմնահարցերը՝ կփորձենք ներկայացնել այն հետևյալ նկատառումներով.
• պատմական էքսկուրս խմբային ուսուցման ձևերի կիրառման և կատարելագործման մասին,
• վկայություններ նման աշխատանքների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ,
• ներկայացումներ անձնական փորձառությունից:

Շատերը բազմիցս կիրառել են համագործակցության հենց այս ձևը իր տարբեր դրսևորումներով, ուստի մենք ակնկալում ենք արձագանքներ թերևս ամենատարածված, ամենամախրճնորդի և կիրառելի մեթոդի մասին:

Նար-Դոսն ասել է, որ աստծուն նկարելը ավելի հեշտ է, քան աքաղաղ նկարելը, որովհետև աստծուն ոչ ոք չի տեսել, ամեն մեկը կարող է իր ձևով նկարել, ոնց էլ նկարես, կընդունվի, բայց եթե փորձես աքաղաղ նկարել, օրինակ, առանց պոչի կամ առանց կատարի, բոլորը կնկատեն: Այնպես որ, ներկայացնել մի թեմա, որ բոլորին ծանոթ է, խոսել առավելությունների և ռիսկերի մասին, այդքան էլ հեշտ չէ:

Խմբային աշխատանքը ժամանակակից համագործակցային ամենատարածված մեթոդներից մեկն է, որն ունի կիրառման բազմապիսի ձևեր և տարբերակներ: Ուսումնառության գործընթացում այսպիսի աշխատանքներ ճիշտ կազմակերպելու համար, այնուամենայնիվ, պետք է ունենալ որոշակի համակարգված տեղեկատվություն:

Ցանկացած աշխատանք սկսելուց առաջ սահմանվում է վերջնարդյունք և որոշվում է այնպիսի գործիքակազմ, որը նպատակ է ակնկալվող նպատակներին հասնելուն: Ի՞նչ վերջնարդյունք ենք սահմանել մեր աշխատանքի համար:

- առավել արդյունավետ դարձնել ուսուցչի աշխատանքը,
• ներկայացնել անհատական փորձառությունը և ակնկալել գործընկերների տեսակետները,
• սահմանել խմբային աշխատանքների կազմակերպման ամենաարդյունավետ միջոցները:

Ցանկացած տիպի դասավանդման նպատակն է սովորեցնել սովորել: Սա համարվում է նաև խմբային ուսուցման հիմնական նպատակը: Դրան հասնելու համար ըստ Դիստերվեզի, անհրաժեշտ է զարգացնել սովորողների մտավոր կարողությունները և ինքնուրույն գիտելիք ձեռք բերելու հմտությունները:

Խմբային ուսուցման եղանակը անցել է զարգացման երկար ճանապարհ, և մեծ մտածողները կարևորել են սովորողի կողմից գիտելիք որոնելու գործընթացը:

Ըստ Կոնֆուցիոսի՝ մարդու փրկությունը ոչ թե նրան մի ափսե ուտելիք տալուց է կախված, այլ սովորեցնելուց, որ նա ինքը ձեռք բերի այդ ուտելիքը:

Ըստ Վիգոտսկու՝ անձը զարգանում է գործունեության մեջ, իսկ էյնշտեյնը գտնում է, որ պետք է հաշվի առնել սովորողի նախափորձություններն ու կարողությունները:

Յենց այս սկզբունքներն ենք հիմք ընդունել խմբային աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար.

- անհատի կողմից գիտելիք որոնելը,
• փոխգործակցելը այլ անձանց հետ՝ ըստ նախափորձությունների և կարողությունների:

Յուրաքանչյուր նորը լավ մոռացված հիմն է: Պատմական զարգացման հին շրջանում, երբ կրթությունը իշխող խմբերի կամ դասակարգի մենաշնորհն էր, գործող դպրոցները հիմնականում մասնավոր էին և վճարովի, իսկ կրթությունը կազմակերպվում էր անհատական սկզբունքով:

Միջնադարյան Եվրոպայում, ապա Չայաստանում և Կիլիկիայում 12-15-րդ դարերում գործող համալսարաններում ուսուցման գործընթաց են ներթափանցել գրույց-բանավեճերը, խմբային մրցակցությունը, գործնական պարապմունքները, տնային հանձնարարությունները և այլ մեթոդական հնարներ (Անատոլի Սահակյան, Մանկավարժական մտքի պատմություն, ուսումնական ձեռնարկ, 2010թ., էջ 72-73, «Մանկավարժ» հրատ.): Այստեղ ուսուցումը տարվում էր ոչ թե անհատական, այլ խմբային ձևով: Այսինքն՝ ուսուցիչը միաժամանակ աշխատում էր խմբի հետ, ոչ թե անհատապես, առանձին-առանձին: Ուսուցման այս ձևը, այնուամենայնիվ, շատ հեռու էր խմբային ուսուցման ժամանակակից պատկերացումից: Այն չունեցրեց նրա հիմքում ընկած ամենակարևոր բնութագրիչը, այն է՝ խմբի անդամների համագործակցությունը: Սովորեցնողը ուղղակի խմբի հետ է աշխատում, և սովորողները ոչ թե խորհրդակցում և համատեղ ակտիվ աշխատանք են ծավալում, այլ սովորում են ուսուցչի հանձնարարած անհատապես:

Նման ձևով կազմակերպվող պարապմունքը իր ձևով պատմական խոր արմատներ ունեցող ավանդական ուսուցում է, որն իրականացվում էր դասարանում դարեր շարունակ և հատկապես բնութագրվում է երկու կարևոր առանձնահատկությամբ.

- ուսումնական խմբի անդամները գտնվում են մրցակցային հարաբերություններում, այլ ոչ թե համագործակցային փոխազդեցության գործընթացում,
• ուսումնական պարապմունքներին բնորոշ է ընդհանուր ճակատի բացակայությունը:

Ըստ էության, այսպիսի աշխատանքը կա-

ռելի է բնութագրել որպես խմբային-անհատական աշխատանք: Այսինքն՝ ուսուցչի կողմից ներկայացվում էր պատրաստի գիտելիքը, սովորողները, չնայած ընդգրկված են մեկ ամբողջական խմբում, առանձին-առանձին, սերտողությամբ ու հիշողությամբ վերարտադրում էին, մտապահում՝ հետազայում այն կիրառելու կամ չկիրառելու համար:

Գործնականորեն վերջին ժամանակներում դժվար է առանձնացնել որևէ խոշոր մտածողի, որն իր աշխատություններում այսպես թե այնպես շոշափած չլինի համագործակցային ուսուցման հարցը:

Ուսուցման դաս-դասարանային համակարգի հիմնադիրը չէին մանկավարժ, հունամիստ Յան Անու Կոմենսկին է, որը ժամանակի անհրաժեշտություն համարեց դասավանդումից անցնել դեպի սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեություն, ինչի հիմքի վրա հետագայում ներդրվեցին մի շարք մանկավարժական ուղղություններ:

Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Բել-Լանկաստերյան համակարգ: Գեռես 18-րդ դարի վերջերից (1798 թ.) Մեծ Բրիտանիայում սկիզբ առած, հետագայում լայն տարածում գտած այս մեթոդի հիմնական սխեման հետևյալն է. ուսուցիչն ուսումնական խմբի անդամներից ընտրում է մի քանի ավագների՝ ընդունակ աշակերտների, որոնք կոչվում էին մոնիտորներ և հիմնականում աշխատում նրանց հետ: Ընտրված աշակերտներից յուրաքանչյուրին կցվում է աշակերտական փոքրաբանակ խումբ, որտեղ նրանք կատարում են ուսուցչի դերը: Այս ձևը հնարավորություն էր տալիս մի կողմից որոշ չափով հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ խթանել մոնիտորների ինքնակրթությունը և լուծել մանկավարժական կարգերի պակասի խնդիրը: Մանկավարժական այս համակարգի սկզբունքները հիմք հանդիսացան հետագայում խճանկարի մեթոդի կիրառմանը:

Մոնտեսորի մեթոդ: 19-րդ դարի վերջին իտալացի բժիշկ, մանկավարժ Մարիա Մոնտեսորիի որոնելով մեթոդով համատեղվեցին անհատական ինքնուրույնության և ընկերական փոխօգնության գաղափարներն ուսուցման կազմակերպման գործընթացում: Դա հնարավորություն տվեց միատարր և միանակարգակ աշակերտական կազմ ունեցող ուսումնական խմբերի փոխարեն ստեղծել տարանակարգակ կազմով ուսումնական խմբեր: Հետագայում այս մեթոդի ձևափոխված տարբերակը հայտնի դարձավ որպես Դալտոն-պլանի մեթոդ:

Բրիգադային-լարարատոր մեթոդ: 20-րդ դարի քսանական թվականներին խորհրդային երկրում լայն տարածում գտած մոտեցումներից է: Ուսումնական խումբը բաժանվում էր փոքր ենթախմբերի՝ բրիգադների: Յուրաքանչյուր բրիգադում փոխօգնության, փոխվարժանքի և համագործակցության միջոցով իրագործվում էին ուսումնական նպատակներ, իսկ յուրաքանչյուր աշակերտի արդյունքը գնահատվում էր ընդհանուր բրիգադի ցուցանիշներով:

Խմբային աշխատանքի հետազոտության մեթոդի ակունքները առկա են 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուլիի տեսության մեջ: Նա գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի համատեղ աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստակից ուսումնական ծրագրերում, որպեսզի այդ ամենը կիրառեն կյանքում:

Նման բազմաթիվ նոր մեթոդների և մեթոդական մոտեցումների հեղինակ է Բենջամին Բլումը, որը երկարատև մանկավարժական հետազոտությունների արդյունքում եկավ այն եզրակացության, որ բոլոր երեխաները սովորում են և կարող են ապահովել բարձր առաջադիմություն, եթե կիրառվեն խմբային ուսուցման բազմապիսի մեթոդներ:

Ազատ խմբային աշխատանքի մեթոդի հեղինակ է Ֆրանսիացի առաջադիմական մանկավարժության ուղղության ներկայացուցիչ Ռոժե Կուզինեն: Այս մեթոդի հիմքում ընկած է սովորողների ազատության և ճանաչողական գործունեության մեխանիզմը: Ըստ այդմ՝ աշակերտները դասարանում բաժանվում էին խմբերի և ընտրում նախապես հայտնի զբաղմունքներից կամ ուսումնական թեմաներից որևէ մեկը, իսկ ուսուցիչը միայն հետևում էր խմբի աշխատանքին, անհրաժեշտության դեպքում խորհուրդներ տալիս և ստուգում նրանց աշխատանքի արդյունքները: Կուզինեն տարբերակում էր դասավանդումը և ուսուցումը: Նրա մեթոդը թույլ էր տալիս երեխաներին ապրել, շփվել, աշխատել խմբում, զարգացնել նպատակասլացություն, համբերություն և նախաձեռնողականություն:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին խմբային ուսուցման մեթոդի կատարելագործման ուղղությամբ ծանրակշիռ ներդրում ունեցան պրոֆեսորներ Շարոն և ու Ջեֆ Փեթին, որոնց առաջադրած ակտիվ ուսումնառության մեթոդները դարձան ուսուցումը խթանող լավագույն միջոցներից:

Բովանդակային առումով ուսուցման համագործակցային խմբային մեթոդը կապվում է կյանքի առաջընթացին, մարդու ազատության սահմանմանը, հասարակության մեջ անհատի տեղ ու դերին և էապես տարբերվում է խմբային ձևով կազմակերպվող ուսուցումից նաև նրանով, որ վերջինս կազմակերպվում էր բացառապես դասարանում, իսկ առաջինը հաջողությամբ կարելի է իրականացնել նաև դասարանից դուրս:

Հետազոտելով մեր և մեր գործընկերների փորձը՝ պարզել ենք, որ ուսումնառության կազմակերպման խմբային մեթոդը բավական բազմահմար է, բազմաշերտ ու բազմաբովանդակ, հնարավոր է իրականացնել համարյա բոլոր տարիքային խմբերում, որոնք կարող են ունենալ իմացության համապատասխան մակարդակ և պատրաստվածություն: Կիրառելի է դասի տարբեր փուլերում, տարբեր վերջնարդյունքների ակնկալման պարագայում, ինչպես նաև հանձնարարելի է տնային աշխատանքների կատարման, միջոցառումների կազմակերպման, նախագծային ուսուցման ու նաև՝ հատկապես վերջին ամիսներին կարևորություն ստացած հեռավար ուսուցման ժամանակ:

Այն արդյունավետ է սովորողների մտածողությունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը և այլ հմտություններ զարգացնելու միտված տարբեր առաջադրանքներ կատարելիս:

Ինչո՞ւ է հարմար և բազմագործառույթ ուսուցման խմբային մեթոդը:

Հասարակության զարգացման ժամանակակից մակարդակը ենթադրում է տեղեկատվության ահռելի հոսք, հնարավորինս կարճ ժամանակում գիտելիքը յուրացնելու, տեսակավորելու, համակարգելու համար հաճախ պահանջվող մի քանի ուղեղների համատեղ աշխատանք, համագործակցություն, կարծիքների համադրում և հակադրում, նաև գիտելիքի որոնում, ոչ թե սերտում:

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ԽՄԲԱՅԻՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բաց նամակ

9 Այս ամենից բխում է, որ հմուտ ուսուցչի կողմից համընդարձակ խմբային աշխատանքը թե՛ դասարանում և թե՛ դասարանից դուրս նախատեսում է ուսումնական նյութի ամբողջական յուրացում բոլոր սովորողների կողմից, ինչպես նաև՝ ժամանակի խնայում:

Ըստ Տնտեսության համաշխարհային համաժողովում հաստատված բնութագրիչների՝ 21-րդ դարի աշակերտը պետք է ունենա.

- գիտական, ֆինանսական, տեղեկատվական-տեխնոլոգիական, մշակութային, քաղաքացիական գրագիտություն,
- քննադատական մտածողություն,
- ստեղծագործականություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- հետաքրքրասիրություն,
- նախաձեռնողականություն,
- հարմարվողականություն,
- համառություն,
- առաջնորդություն,
- մշակութային հասարակական գիտակցություն:

Այս հատկանիշների մեծ մասը հիմնվում է նոր, ժամանակակից տեխնոլոգիաների ու համագործակցային մեթոդների կիրառման և ուսումնառությունը համագործակցային մեթոդներով ու հնարներով կազմակերպելու վրա: Նման անհատի դաստիարակության համար անհրաժեշտ է նույնքան և նույնիսկ ավելի բազմակողմանի զարգացածություն ունեցող ուսուցիչ, որը պետք է հաշվի առնի, որ եթե ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներից տիրապետելն է, ապա համապատասխան դասարանում համապատասխան մեթոդ ընտրելը ուղիղ համեմատական է ուսուցչի վարպետությանը:

Ցանկացած մեթոդի կիրառման առաջնային նպատակը արդյունավետության կանխատեսումն է: Իսկ թե ինչպես հասնել ուսուցման արդյունավետության սահմանմանը, հաշվի առնենք որոշ հիմնարար սկզբունքներ, առանց որոնց համագործակցային ուսուցումը պարզապես տեղի չի ունենում: Չորս հիմնարար սկզբունքներ են (ըստ Սպենսեր Կազանի)

ա) զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ.

Ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ. այսպիսով՝ յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ) անձնական պատասխանատվություն.

Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կրկրեստ մասի համար:

գ) կառուցողական փոխկախվածություն.

Անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացումն համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն:

դ) հավասարաչափ մասնակցություն.

Աշակերտները մասնակցում են աշխատանքին՝ ըստ իրենց ընդունակությունների: Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով:

Իսկ ի՞նչ ենք ակնկալում արդյունավետ խմբային աշխատանքի դեպքում. ի դեպ, սա վերջնարդյունքի կանխատեսում է նման աշխատանքներ կազմակերպելիս:

Խմբային աշխատանքի արդյունավետ կազմակերպումը.

• ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորմանը,

• ընդլայնում է սովորողների մտահորիզոնը, հետաքրքրությունների շրջանակը

• զարգացնում է ճանաչողական ակտիվություն, տարակարծության նկատմամբ հանդուրժողականություն,

• խթանում է թիմային, փոխհամաձայնեցված և համագործակցային աշխատանք իրականացնելու հմտություններ և կարողություններ,

• ձևավորում է կենսափորձ և շրջակա միջավայրը ճիշտ ընկալելու հմտություններ,

• ենթադրում է ուսումնական նյութի համակողմանի ընկալում,

• յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում դրսևորվելու և սեփական կարծիքը հայտնելու:

Խմբային աշխատանքն ունի նաև թերություններ.

• հնարավոր է սովորողներից ոմանք դուրս մնան իրենց խառնվածքի, ուսումնական ոճի կամ ընդունակությունների խիստ տարբեր լինելու, տարանկարգակության կամ բարդությամբ կարծիքային պատճառով,

• ժամանակատար է,

• աղմկոտ է,

• լիդերականության մղելու ռիսկ ունի: Խմբային աշխատանքի ժամանակ ծավալվում է երեք տիպի փոխներգործություն.

**սովորող-ուսուցիչ
սովորող-սովորող
սովորող-ուսումնական նյութ**

Այս 3 օղակները լրացնում են իրար. որևէ օղակի բացառումը ծախսողում է խմբային աշխատանքը: Սրանք խմբային ձևով ուսումնառության ամբողջական համակարգի բաղադրամասերն են:

Սովորող-ուսուցիչ փոխներգործության մեջ ձևավորվում են սովորողների և դասավանդողի միջև ոչ սովորական հարաբերություններ: Դասավանդողը ստանձնում է **ուղղորդողի, համակարգողի, խորհրդատուի, օգնականի դերը**, և աշխատանքը դառնում է ավելի ապահով և մոտիվացնող: Փոխադարձ վստահության, թիմային համերաշխության և հարգանքի անմիջական հարաբերությունները պահպանվում են նաև արտադասարանական աշխատանքային հարթակներում :

Սովորող-սովորող հարաբերությունների արդյունքում ձևավորվում է պարտավորվածություն խմբի յուրաքանչյուր անդամի նկատմամբ («Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի»), քննարկվող խնդրի շուրջ սեփական կարծիք ունենալու պատասխանատվություն, մոտիվացիա և գիտելիքների կիրառման ձգտում, ցանկացած իրավիճակից ելքի որոնման, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման հմտություն: Ձեռք են բերվում ոչ ստանդարտ, կոնցեպտուալ մտածելակերպ, ինքնարժևորման ավելի բարձր աստիճան, դիմացինի կարծիքը լսելու և ընդունելու կարողություններ:

Սովորող-ուսումնական նյութ աշխատանքի արդյունքում ենթադրվում է ինքնավստահության, կառուցողական համակարգվածության ձեռքբերում, տեսական և փորձարարական գիտելիքների կիրառման ձգտում, ուսումնական նյութի ինտենսիվ և ստեղծագործաբար յուրացնելու ձգտում, ինչպես նաև հետադարձ կապի ապահովում:

Խմբային աշխատանքի կազմակերպման ժամանակ կարևոր են ուսումնական իրավիճակի ապահովումը, սովորողների և ուսուցչի պահվածքը: Սրանք ուղղակիորեն կապված են խմբային աշխատանքում փոխներգործող երեք տարրերի հետ. այն է՝ ուսուցիչ-սովորող-ուսումնական նյութ:

Ուսումնական իրավիճակը չափազանց կարևոր է խմբային աշխատանքի այս կամ այն մեթոդը ընտրելու և խմբերի ճիշտ ձևավորման տեսակետից:

Խմբեր կարելի է ստեղծել պատահականության սկզբունքով, մանավանդ եթե տվյալ դասարանում սովորում են ընդունակություն-

ներով, կարողություններով և հետաքրքրություններով իրարից առանձնակի չտարբերվող աշակերտներ: Կարելի է ձևավորել ուսուցչի հայեցողությամբ կամ սովորողների ցանկությամբ: Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել կազմակերպվելիք առաջադրանքի բնույթը, դասարանի կազմը և ակնկալվող վերջնարդյունքը: Հարկավոր է ապահովել արդյունավետ համագործակցության բոլոր պայմանները՝ ընդունակությունը և գիտելիքը, անձնական համակրանքը, ինչպես նաև զենդերային հավասարակշռությունը:

Խմբեր կարելի է ձևավորել տարբերակման սկզբունքով՝ հաշվի առնելով առաջադրանքի տեսակը, հատկացվող ժամանակը և այլն: Փոքր խմբերով աշխատելով՝ աշակերտները, բացի գիտելիք ձեռք բերելուց, հնարավորություն ունեն ցուցաբերելու էմպատիա (ապրումակցում) և անկախ մտածելակերպ: Նրանք երկարաժամկետ հիշողության մեջ պահում են անենակարևորը, քանի որ տարբերում են գլխավորը երկրորդականից, կատարելագործում են սեփական վարքագծի վերահսկողությունը:

Խմբային աշխատանքի արդյունավետության կարևոր նախապայման է ուսուցչի պահվածքը. Նա պետք է մնա գրեթե աննկատ և դեկավարի աշակերտների աշխատանքն անուղղակի կերպով, ցուցաբերի համաչափ վերաբերմունք, անհրաժեշտության դեպքում տա պահանջվող ուղղորդում:

Հիմա փորձենք սահմանել խմբային աշխատանքներ հանձնարարելու նպատակները:

Քեյսային (իրավիճակային) նպատակները կարող են լինել.

- ա/ նոր թեմայի ընկալմանը նպաստող,
- բ/ ուսուցման ամփոփմանը և համակարգմանը օժանդակող,
- գ/ ստուգմանը և գնահատմանը առնչվող,
- դ/ նախագծային ուսուցումը խթանող:

Խմբային աշխատանքների կազմակերպման կառուցողական նպատակներն են՝
ա/ ստուգել գիտելիքը,
բ/ զարգացնել հմտությունները,
գ/ խթանել ստեղծագործականությունը:

Խմբային ուսուցումը ունի նաև իր դաստիարակչական նպատակները, որոնք են, օրինակ, բարոյական, մտավոր, աշխատանքային, իրավական, գեղագիտական: Սակայն առանցքայինը սովորողին մասնակից դարձնելն է գիտելիքի ձեռքբերմանը, որպեսզի՝
ա/ դառնա ինքնուրույն մարդ,
բ/ վերլուծի իր արարքները, վարքը,
գ/ ինքնակատարելագործվի,
դ/ իրացնի իրեն շրջակա աշխարհում,
ե/ սովորի ՍՈՎՈՐԵԼ:

Ի՞նչ մեթոդներ են արդյունավետ խմբային ուսուցում անցկացնելիս:

«Սեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք»,- ասել է Վիգոտսկին:

Յնվելով անձնական փորձառության վրա՝ կներկայացնենք մեթոդներ, որոնք մեծ ներուժ ունեն փոքր խմբերով ուսուցում կազմակերպելու համար: Էական է տարբեր մեթոդների համադրումը և խմբային աշխատանքների շարունակական կիրառումը տարբեր թեմաների համակողմանի ուսուցման նպատակով: Օրինակ՝ «Գործնական գործունեություն» թեման ուսուցանելիս շարունակաբար կարելի է կիրառել խմբային աշխատանքի մի քանի մեթոդներ՝

1. Տեքստի վերաբերյալ հարցադրումներ
2. Առանցքային կետեր
3. Ձևանմուշով բացատրություն
4. Մտավոր փորձ
5. Փոխակերպում

Նման աշխատանքի համար հարմար է հանձնարարել, օրինակ, ըստ Գ. Մաթևոսյանի «Անհիծոր» ստեղծագործության կազմված հետևյալ ուսումնական նյութը.

Ալավերդու շրջանի Աթանի-Անհիծորի Ստ. Շահումյանի անվան սովխոգի դիրեկտոր ընկ. Գ. Եղիկյանին, Սովխոգների վարչությանը, Ալավերդու շրջանի ղեկավարներին, բայց ամենից շատ՝ Ստ. Շահումյանի անվան սովխոգի դիրեկտոր ընկ. Գ. Եղիկյանին:

Դուք բյուրոկրատ չեք, իհարկե, տեսել եք, համաձայն եք, որ աշխատանքը, թեկուզ և ամենածանրը, պետք է երգ լինի, թեթև լինի, ինչպես խոտհունձ վերարտադրող սյուլիտում: Դուք գիտեք նաև, որ այդպես կլինի միմիայն սյուլիտում, որովհետև իրականությունը սյուլիտ չէ: Բայց պե՞տք է գոնե այնպես լինի, որ սյուլիտի տարրերը իրականության մեջ լինեն: Ախր այդպես դարձնելու հնարավորությունը դուք լրիվ ունեք, ընկեր Եղիկյան: Ախր դրա համար չնչին բան է պահանջվում, ընկեր՝ Եղիկյան: Ասեմ, թե ինչ:

Թույլ տաք, որ մարդիկ ծի ունենան, աշխատանքի ծիով գնան-գան, քանի որ «Կուլ-գա» կամ տրամվայ չունեք: Եթե ծիուց, որպես կապիտալիզմ ծնողից, շատ եք վախենում, անցկացրեք ուրեմն տրամվայի գծեր՝ գյուղից դեպի բոլոր հանդերը:

Թույլ տաք, որ մարդիկ ունենան տասական ոչխար: Ես սա ասում եմ առանց չար դիտավորության, ասում եմ զուտ նրա համար, որ մածուկը լավ ուտելիք է և հնձվորին, ձեր խոտհարքը հնձողին, վնաս չէր տա: Եվ, ազնիվ խոսք, ձեզ էլ վնաս չէր տա: Կով, փաթ աստծո, թույլատրում եք. Թույլատրեք՝ նաև խոտ այդ կովի համար. Թույլատրեք ոչ թե իրիկուն-առավոտ, խորոմ-խորոմ և ջլատելով հնձվորին, սեզոնում երեք-չորս օր: Գիտե՞ք ինչ հանգստություն էր աշխատավորի հոգում այս ձեռք դրեղին այնպես ծանր-ծանր նստած խոտի դեզերը:

Դուք իսկի չե՞ք մտածել, որ ձեր անտառները ուղղակի խոզաբուծարան են, և խոզ պահելը ոչ ձեզանից, ոչ բանվորից ոչինչ կխլել: Ինչո՞վ վատ կլինեք, ասացեք ուրեմն այդ խոզը քեզ վրա նստած է լինում կոպեկներ և մի ամբողջ ձմեռվա կուշտ կյանք է տալիս: Թույլատրեք պահել խոզ:

Շատ չեղավ, չէ՞: Չի, խոզ, ոչխար: Եթե հաշվի առնեք, որ դուք ապրում եք անասունների անսպառ ծովի մեջ, շատ չեղավ: Դուք հնձում եք խոտհարքների երեք մասի մեկ մասը: Թե՞ ավելի քիչ: Իսկ մնացածը: Մնացածը ոտքի վրա փտում-կորչում է. Թողեք հնձեն: Սովխոգը դրանից ինչո՞ւ պիտի տուժեր:

Յետո, տնամերձ հողերը վերցրել քչացնում եք: Ախր շատն են քչացնում, ընկեր Եղիկյան, դուք քիչը ո՞նց եք քչացնում, ո՞ր խղճով: Ապա մի տեսեք այդ «շատով» այնքան կարտոֆիլ տալի՞ս է, որ մի ձմեռ մի ընտանիքի բավարարի: Եղա՞վ այդպես: Եթե եղավ, ապա, խնդրեմ, բանվորին այնքան աշխատավարձ տվեք, որ և՛ կարտոֆիլ գնի, և՛ կաղամբ, և՛ յուղ, և՛ միս, և՛ հագուստ: Դուք երկու-երեք ամիսը մեկ անգամ եք աշխատավարձ տալիս, տվածներդ էլ միայն հագուստի գին, և չեք թողնում, որ մարդիկ ունենան կարտոֆիլ, միս, յուղ, չեք թողնում, փաստորեն, մարդիկ ուտեն: Ինչո՞ւ չեք թողնում: Նրա համար, հա՞, որ սովխոգների կանոնադրության մեջ չի թույլատրվում, խոզ պահել, ձի պահել, 1500 մետրից ավելի հող ունենալ: Ասացեք, խնդրեմ, իսկ այդ կանոնադրության մեջ գրված է, որ երկու-երեք ամիսը մեկ անգամ են աշխատավարձ ստանալու: Չի գրված: Այդ դուք եք հնարել: Եվ ո՞ր օրենքով: Սովխոգների կանոնադրության տառով, հա՞:

1. Տեքստի վերաբերյալ հարցադրումներ Սովորողները բաժանվում են խմբերի: Նրանց հանձնարարվում է մի քանի թույլ միայնակ կարգավ տեքստը՝ միմյանց առաջադրելով հարցեր, որոնց պատասխանը կա տեքստում:

ՆՈՐԱՐԱՐ

2. Առանցքային կետեր

Խմբերը որոշում են տեքստի, օրինակ, հինգ առանցքային կետերը (գլխավոր կետերի և խմբերի քանակի համընկնումը նպաստում է գործընթացին)

3. Ձևանմուշով բացատրություն

Ձևանմուշը (օրինակը) լավագույն փորձի կամ մշակված օրինակի մոդել է: Այս դեպքում խմբերին հանձնարարվում է, օրինակ, բառային աշխատանք:

Առանձնացնել ավելորդ և պասիվ բառաչերտին պատկանող բառերը՝ բարբառային, ժարգոնային արտահայտություններն են, հնարանությունները, նորարարությունները, ինչպես նաև երգիծական կամ պարադոքսային արտահայտություններ պարունակող հատվածները և այլն:

4. Ստավոր փորձ

Սովորողները իրենց պատկերացնում են այլ իրավիճակում, որը կարող է ներկայացնել ուսուցիչը կամ բխի հանձնարարված առաջադրանքից: Օրինակ՝ որպես գյուղացիներ, որպես վարչության պետ կամ որպես նախագահ:

5. Փոխակերպում

Խմբերին համապատասխանաբար հանձնարարվում է գրել դիմումներ, պաշտոնական նամակներ, բնութագրեր՝ առանձնացնելով գլխավորը երկրորդականից, փոխակերպելով տեքստի որոշ հատվածներ, ապահովելով գործնական գրություններին հարիր բառապաշար:

Մեթոդների նման համադրումը հնարավորություն է տալիս համակողմանիորեն ուսումնասիրելու և պարզաբանելու ցանկացած խրթին ու ծավալուն թեմա, նաև բազմահնար, բազմաբնույթ դարձնելու գործընթացը:

Խճանկար

Խճանկարը արդյունավետության բարձր մակարդակ ապահովող համագործակցային ուսումնառության բազմաթիվ մեթոդներից մեկն է, որը կիրառվում է ծավալուն, դժվարընկալելի թեմաների ուսուցման ժամանակ, ցանկալի է կիրառել երկժամյակներին, քանի որ խիստ ժամանակատար է:

Օրինակ՝ «Պետական կառավարման ձևեր» թեմայի դասավանդման դեպքում, կիրառելով **Խճանկարի մեթոդը**, սահմանվում է վերջնարդյունք՝ բնութագրել տվյալ հասարակության զարգացման մակարդակին հարիր ճիշտ կառուցակարգը:

Թեման բաժանվում է, ենթադրենք, չորս ենթաթեմաների՝

- ա/ նախագահական,
- բ/ խիստ նախագահական,
- գ/ խորհրդարանական,
- դ/ սոցիալիստական հանրապետություններ:

Սովորողները բաժանվում են չորս խմբի: Խմբերը ցանկալի է՝ ձևավորվեն ուսուցչի կողմից և լինեն խառը՝ ընդունակություններով, փորձառությամբ և սեռով: Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է մեկ կառավարման ձև:

Դրանից հետո սովորողները ձևավորում են նոր խմբեր: Յուրաքանչյուր նոր խումբ նմանվում է խճանկարի, քանի որ նախնական չորս խմբերից յուրաքանչյուր խմբում մեկ անձ է մնում: Յուրաքանչյուր խումբ յուրաքանչյուր կացութաձևի ներկայացման համար մեկ փորձագետ է ունենում:

Այդ ժամանակ նոր խումբը կատարում է վարժություն, որի ընթացքում անդամները, միմյանց հետ համագործակցելով, բացատրում են համապատասխան կացութաձևի մասին իրենց սովորածը՝

- ա/ բացատրելով ընդհանրությունները,
- բ/ ընդգծելով առանձնահատկությունները,
- գ/ դասակարգելով ըստ պետությունների:

Դասարանի ընդհանուր յուրացման մակարդակը վերհանելիս կարևոր է անդրադառնալ խմբերի դիրքորոշումներին: այն է՝ որն է նախընտրելի մեր պարագայում՝ էլնելով արտաքին մարտահրավերներից, ներպետական շահերից և ազգային անվտանգությունից:

Բոնոյի մտածողության 6 գլխարկները

Այս մեթոդի հիմքում ընկած է զուգահեռ մտածելու հայեցակարգը: Որպես կանոն, այս կամ այն որոշումներն առաջանում են քննարկման ընթացքում մտքերի բախումներից, սակայն ոչ միշտ է ամենալավ տարբերակն ընտրվում: Այս մեթոդի օգնությամբ տարբեր մոտեցումներ ու գաղափարներ հանդես են գալիս միաժամանակ՝ առանց իրար հանդեպ ինչ-որ առավելությունների: Նկարագրելով մտածելու 6 ռեժիմներ՝ Բոնոն համեմատում է դրանք 6 տարբեր գույնի գլխարկների հետ:

1. Սպիտակ գլխարկը բնութագրվում է ամբողջ տեղեկատվության նկատմամբ ուշադրության կենտրոնացմամբ: Եթե վերլուծում ենք որևէ գրական երկ, ապա սպիտակ գլխարկ կրողները ներկայացնում են դիպաշարը հանգուցային կետերով:

2. Կարմիր գլխարկը զգացմունքների, հույզերի արտահայտումն է՝ առանց խորանալու մանրամասների ու փաստարկների վրա: այս փուլում արտահայտվում են բոլոր ինտուիտիվ կամ նախազգացումները: Սովորողները կիսվում են հույզերով ու զգացմունքներով (վախ, գայրույթ, հիացմունք, ուրախություն և այլն):

3. Դեղին գլխարկը պոզիտիվն է, լավատեսությունը: Դնելով այն՝ մենք մտածում ենք ենթադրյալ առավելությունների մասին, որը տալիս է լուծումներ կամ բերում առաջարկներ, թաքնված դրական ռեսուրսներ:

4. Այս գլխարկը դեղինի ճիշտ հակառակն է: Այս գլխարկով պետք է տալ իրավիճակի բացառապես կրիտիկական գնահատականը (գաղափարներ, լուծումներ, և այլն)՝ ուշադրություն դարձնելով հնարավոր ռիսկերի ու թաքնված սպառնալիքների վրա, գոյություն ունեցող, ինչպես նաև երևակայական թերությունների վրա:

5. Կանաչ գլխարկը ստեղծագործականության և կրեատիվության գլխարկն է: Նրա կրողները պարտավոր են գտնել այլընտրանքներ, գեներացնել նոր գաղափարներ, մտածել ոչ ստանդարտ ու սադրիչ մոտեցումներ, փնտրել ցանկացած այլընտրանք:

6. Կապույտ գլխարկը, ի տարբերություն մյուս հինգի, նախատեսված է գաղափարների իրականացման գործընթացը կառավարելու, քննարկելու, ամփոփելու համար:

Բանավեճ

Բարձր արդյունավետություն ապահովող համագործակցային խմբային ուսումնառության մեթոդ է, որը կիրառվում է երկու կամ ավելի հակասական տեսակետներ պարունակող թեմաների դեպքում:

Ենթադրենք քննարկում ենք «Ազատագրված տարածքների վերադարձումը Ադրբեյջանին հանուն խաղաղության» թեման:

Սովորողները բաժանվում են կողմ և դեմ խմբերի, ստանում են մյուսեր, հետազոտում են և պատրաստվում: Այնուհետև բաց քննարկում են վարում, որի ընթացքում բանավիճում են սեփական տեսակետի համար:

Կողմ դիրքորոշմամբ հանդես եկող թիմը թեման դիտարկում է խաղաղության պահպանման և ազատագրված տարածքներում բնակվող մարդկանց կենսամակարդակի բարձրացման տեսանկյունից՝ հիմնավորելով փաստերով:

Դեմ թիմը իր դիրքորոշումն է պաշտպանում՝ առաջ բերելով անվտանգության խնդիրը: Վերջնարդյունքում մշակվում է հնարավոր լավագույն սցենարը:

Նույն սկզբունքով է հիմնավորվում **Համեմատություն և հակադրություն** մեթոդը, որն օգնում է սովորողներին պարզաբանելու հաճախ շփոթվող կամ դժվար ըմբռնելի հասկացությունները, ըմբռնելու այսօրվա մեր ընկալումներում, օրինակ, պատմական կամ գրական կերպարների պարադոքսը և հասկանալու՝ որքանով է խնդրահարույց վիճակը վտանգավոր արդիականության տեսակետից: Այս դեպքում խնդրի քննարկման հիմնական վեկտորը արդիականացումն է:

Դերային խաղ

Այս մեթոդը օժանդակում է սովորողների սոցիալականացմանն ու պատասխանատվության բարձրացմանը: Սակայն դերերը կարող են տեղիք տալ սովորողների հավակնոտ ձգտումներին:

Սակայն դերերը կարող են տեղիք տալ սովորողների հավակնոտ ձգտումներին:

Կա այսպիսի հասկացություն՝ «Դերերի օգտակար համադրություն», որը չափազանց կարևոր է՝ կախված նպատակադրումից, առաջադրանքից, խմբի կազմից և սահմանված վերջնարդյունքից:

Այս մեթոդը ցանկալի արդյունքի կիսացնի, եթե ճիշտ կատարվի դերերի օգտակար համադրություն, և սովորողները, լավ գիտակցելով իրենց անելիքները, անընդհատ փոխվեն դերեր բաշխելիս:

Փորձենք ներկայացնել մեր փորձառությունից որոշ վկայություններ՝ դերերի օգտակար համադրություններ առաջարկելով՝ կապված դասարանից դուրս՝ նախագծային ուսուցման շրջանակներում իրականացված աշխատանքներից:

Օրինակ՝ Թումանյանի 150-ամյակին նվիրված նախագիծն իրականացնելիս կատարվել է հետևյալ դերաբաշխումը: պատասխանատու, կազմակերպիչներ, ձևավորողներ, հարգողավարներ, ժամանակ կառավարող, մրցատյան, օպերատոր և 4 խմբեր՝ 4-ական անդամներով: Քննարկվել է ընդհանուր նախագիծը, և յուրաքանչյուրը ստացել է համապատասխան առաջադրանք:

Նախագիծն իրականացնելուց հետո քննարկվել են կատարված աշխատանքի առավելությունները և թերի կողմերը:

Ընդհանրապես, նախագծային մեթոդն ուսուցման հատուկ եղանակ է, որը կենտրոնանում է որևէ խնդրի շուրջ: Յուրաքանչյուր նախագիծ յուրօրինակ է, քանի որ խնդիրները վերացական հասկացություններ չեն, այլ վերցված են իրականությունից: Չկա երկու նմանատիպ նախագիծ, քանի որ մասնակից սովորողները, ուսուցիչները և հանգամանքները մշտապես տարբեր են: Նախագծային մեթոդը պահանջում է սովորողների աշխատանքի գիտակցված ծրագրում: Սովորողները կարող են աշխատանքի իրենց բաժինն ընտրել ըստ իրենց նախասիրությունների, փորձի, ունակությունների և հավակնությունների՝ առանց ուսուցչի կողմից որևէ մեթոդաբանության կիրառման:

Նախագծի աշխատանքային գործընթացը ենթադրում է թեմաներ և հարցողական ուղիներ ընտրել և դրանք քննարկել, հանձնարարություններն ըստ խմբերի բաշխել:

Անդրանիկ Օզանյանի ծննդյան 155-ամյակի կապակցությամբ մշակվել է նախագիծ 11-րդ դասարանի համապատասխան թեմայի շրջանակում: Առանձնացվել է 4 խումբ, որոնք ստացել են առաջադրանքներ՝ ուսումնասիրելու զորավարի կյանքի ու գործունեության տարբեր ոլորտներ: Խմբերը պատրաստել են ներկայացումներ, նաև հարցադրումներ մեկը մյուսին: Որպես վերջնարդյունք ձևակերպել են նամակ-հղումներ զորավարի նախատեսած, բայց չիրականացրած նպատակների մասին (բանակ, անկախ Արցախ):

Եվ **Դերերի բաշխումը**, և՛ թերթիկների, քարտերի և տեսանյութերի միջոցով կիրառվող մեթոդները, և՛ **Աշակերտական սահիկաշարը** կիրառելի են նաև հեռավար ուսուցման պարագայում:

Հեռավար ուսուցման գործընթացի ապահովման նպատակով տեղեկատվական ավանդական ռեսուրսների հետ մեկտեղ խմբային աշխատանքների կազմակերպման ժամանակ օգտագործվում են նաև հատուկ մասնագիտական և էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ստուգող-թեստավորող համալիրներ, ուսումնական տեսաֆիլմեր, ներկայացումներ, ծայնագրություններ, այլ նյութեր:

Որպեսզի հեռավար ուսուցման մեթոդներն արդյունավետ լինեն յուրաքանչյուր սովորողի համար, մանավանդ համավարակի պայմաններում, երբ մեկուսացումը հոգեբանորեն անդրադառնում է սովորողի ակտիվության և ինքնարժեքի մասին գործունեության, անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել սովորողի անհատական տվյալներին, առողջական վիճակին, ապահովել առավելագույն համագործակցություն, իրականացնել հետադարձ կապ, ստեղծել մոտիվացիա և պահպանել այն:

Հեռավար ուսուցման ժամանակ խմբային աշխատանքների կազմակերպումը ունի ռիսկային իրավիճակներ, որոնք չի կարելի անտեսել. Դրանք են՝

- դժվարություններ՝ կապված ուսուցման գործընթացի մասնակիցների միջանձնային անմիջական շփման հետ,
- խնդիրներ՝ կապված արդյունավետ աշխատող փոքր ուսումնական խմբերի ձևավորման հետ՝ համագործակցված ուսուցում իրականացնելու համար,
- խնդիրներ՝ կապված ունկնդիրների կողմից տեղեկատվության ընկալման անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության հետ:

Աշակերտական սահիկաշար (պրեզենտացիա)

Մեթոդը հետաքրքիր է և մոտիվացնող, շատ սիրված է սովորողների կողմից: Հանձնարարելի է որպես տնային աշխատանք նաև հեռավար ուսուցման պարագայում:

Սովորողները ուշադրություն են դարձնում հանձնարարված առաջադրանքի առանձնահատկություններին, ուսուցչի կամ սեփական նախածեղնությամբ բաժանվում են խմբերի, համագործակցում՝ օգտագործելով առցանց տարբեր հարթակներ, խմբերի ներսում կատարում են աշխատանքի, դերերի բաշխում՝ խորացնելով թե՛ առարկայական, թե՛ տեխնոլոգիական գիտելիքները:

Տեքստի վերաբերյալ հարցադրումներ կամ Տեսանյութի շուրջ առաջադրանքներ

Նման ռազմավարությունները սովորողներից պահանջում են տեքստի, տեսահոլովակների, սկավառակների, համացանցային կայքերի և այլ աղբյուրների ըմբռնում և յուրովի ընկալում: Կիրառվում է՝ հաշվի առնվելով հեռավար ուսուցման սկզբունքները, տարբեր հղումներ կատարելով, խմբերի ներսում դերերի բաշխում անելով:

Այսպիսով, փորձեցինք ներկայացնել խմբային աշխատանքների կազմակերպման արդյունավետ միջոցները և մեթոդները, ներկայացրինք նման աշխատանքներ կազմակերպելու անհրաժեշտությունը, նպատակները, ինչպես նաև կիրառելի մեթոդները՝ համարելով սեփական փորձառության օրինակներով: Իհարկե, նաև չբացառեցինք ռիսկային գործոնները մշակված թեմայի վերաբերյալ: Հավաստեցինք, որ խմբային ուսուցման մեթոդիկան արդյունավետ գործիքակազմ է, որի կիրառումը կնպաստի լուծելու այն ուսումնական և կազմակերպական դժվարությունները, որոնք ծառանում են ուսուցչի առաջ:

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ձեյմա Ուայթսոնի այս խոսքերը կարծես ներկայացնում են խմբային համագործակցության կարևորությունը՝ ընդհանուր խնդիրներ լուծելու, նորարարություն իրականացնելու և նպատակադրված ձեռքբերումներ ունենալու համար:


7.4. – Edcamp-ի հարթակում ներկայացրել ենք ԱՀ ուսուցիչների վերապատրաստման Նորվար 34-ի մշակված թեմաներից մեկը: Ընդհանուր առմամբ, կազմակերպության ծրագրերը միտված են կարևորելու ուսուցչի դերը, իրականացնելու Արցախում մասնագիտական-մեթոդական և տեխնոլոգիական վերապատրաստումներ, տարբեր կրթական նախագծեր, որոնք կօժանդակեն նորարարական գաղափարներով գինված ուսուցչական համայնք ձևավորելուն:

Համավարակի պայմաններում պատրաստ ենք տարբեր հարթակներում կազմակերպելու քննարկումներ՝ հաշվի առնելով ոլորտին առնչվող առաջարկություններն ու հարցադրումները: Սպասում ենք ձեր արձագանքներին:

Սանուշ ԲԱԼԱՅԱՆ
Լորեդա ԱԲՐԱՎԱՄՅԱՆ
Սյրեվանակերպի Վ. Զինակիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց
ԱՀ ուսուցիչների վերապատրաստման Նորվար 34

ՎԱԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՐ ՈՒԺԸ ՄԵՐ ԼԵՈՒՆԵՐՆ ԵՆ»



Վերջերս վերահրատարակվել է լրագրող, հրապարակախոս Լվարդ ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ «Կարկանդակ» գիրքը, որը վավերագրություն է Արցախյան գոյամարտի Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանում կատարված հերոսական ու ողբերգական էջերի, քաղաքական լարված բարդ ու հակասական իրադարձությունների մասին: Գրքի գլխավոր հերոսը, որի շուրջ պատվում են գործողությունները, Արցախյան շարժման նվիրյալ Առնո Մկրտչյանն է, որը ենթաշրջանի Յին շեն գյուղի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչն էր՝ խոր գիտելիքներով օժտված անձնավորություն, հայրենասիրության և հանուն հայրենիքի անձնագրողության օրինակ մատող սերնդի համար:

Հրապարակում որոշվեց երկրի Ղեկավարին ծեստ անել՝ ծննդյան օրվա առթիվ շնորհավորել եւ դադարեցնել գործադուլը: «Մենք էլ սովորեցք դիվանագետ լինել»,- ամբոխի մեջ ծայր տարածվեց, ցուցարարները համոզվեցին:

Կարդացին հեռագրի տեքստը: Առնոն ձեռքերով քաշեց երեսի ժպիտը, ու մի քնծածակ կախվեց դեմքին: Հայրապետյան Կամոն հեռվից նկատեց իր ուսուցչին եւ ամբողջ ճեղքելով մոտեցավ.
- Ընկեր Մկրտչյան, վերջը ի՞նչ է լինելու:
- Հիշո՞ւմ ես Խրիմյան Հայրիկի խոսքը:
- Հիշում եմ. երկաթե շերտի պիտի ունենանք... - Կամոն պատմության թունդ սիրահար է: Առնոն նրան ծանոթացնում է ընկերոջ հետ.

- Սլավիկը Հայաստանից է, պատմական գիտությունների թեկնածու է:
- Գործադուլը պիտի շարունակվենք այնքան, մինչեւ մեր ծայրը աշխարհին լսելի դարձնենք:
- Բայց դա ծայրահեղ միջոց է, ընկեր Մկրտչյան:
- Ես անգամ էլ տանուլ տվեցիք: Մենք մեր տունը խնդրանքներով, հեռագրերով, նամակներով քանդում ենք: Կախաղանի ենք արժանի...
- Էլի տաքացա՞ր... - շատ հանգստ ասաց Մանուչարյան Սլավիկը:
- Մենք նույնիսկ են ժամանակ, որ ուսանող էինք, նման սխալներ թույլ չէինք տալիս:
- Դուք ուսանող էիք, բայց գիտակից էիք, ես զանգվածը դեռ բնագործ է գործում:
- Ափսո՛ս ես մարտունակ զանգվածը, շարժիչ ուժ չկա, առաջնորդող միտք չկա...
- Լավ, Առնո, ամեն ինչ սրտիդ մոտ մի ընդունիր, աղբբեջանցի մի լավ խոսք ունի՝ «եղածը եղած է, գնացածը՝ գնացած»: Սոված մեռանք, զնանք մի կտոր հաց ուտենք:

Հրապարակում լռություն տիրեց: Յուրտ քամին այս ու այն կողմ է քաշքշում հավաքարարների ավելելուց հետո հրապարակում մնացած թղթի կտորները: Քանդած վրանների, ձողերի հետքերը վերքի նման մնացել էին ողորկ ասֆալտի վրա:

Ժողովուրդը ցրվել էր, մի մասը ոգեւորված, որ էս անգամ ճակատները պատին չխփեցին, մի փոքրաքանակ մասը՝ վրդովված, գերակշիռ մասը՝ տրիբունից առաջնորդները ինչ ասում են, իրենք համաձայն են:
Տղաները հասել էին Ուզբեկստան փողոցը, որտեղ աներոջ տունն էր: Կինը՝ Ավարդը, արդեն հաց էր դնում սեղանին, իսկ Առնոյի մտքերը հրապարակի իրադարձություններից դեռ չէին անջատվում:

- Մեր էքսան շարչարանը ձորը լցրին... Խաբվեցինք...
- Իրար հետ կապ կպահենք, Գորիսին մոտիկ ես լինելու,- Սլավիկը նկատի ուներ Առնոյի գյուղ գնալու որոշումը:
Առնոն ու Կամոն ուղեկցեցին ու հետ դարձան: Ավարդը սեղանը հավաքել ու անցել էր փոքրիկների ննջարանը: Առնոն մի քարտեզ փռեց սեղանին.

- Նայիր, սա Մեծ Հայքի քարտեզն է: Հետո ձեռքը դրեց մի կետի, որը համապատասխանում է այժմյան Ղազախի շրջանին:
- Կարդա՛, ի՞նչ է գրած:
- Խաղխաղ,- Կամոն կարդաց, բայց բառը ուղեղին ոչինչ չհուշեց:
- Սա հայոց հին պատմական Խաղխաղ քաղաքն է: Երբ պետականությունը կորցրինք, մեր երկիրը բազմեցին: Արցախը իր անկախությունը մինչև 18-րդ դար պահեց:
- Հիմա զաղուք ենք,- իր գիտելիքները փորձեց ցույց տալ նախկին աշակերտը:
- Պիտի հայանամք: Մեր եկեղեցիները պիտի վերակազմենք: Գավառակի հոգեւոր գահահատը մեր գյուղում պիտի լինի...
- Ուսուցի՛չ, երբ մեզ էքսկուրսիայի էիր տարել, մաքրել ենք Թունաստեռի տարածքի եկեղեցին...
- Ամեն պատմական ժամանակաշրջան իր պատմական դեմքն է տվել: Թունա հայրապետը Դավիթ Բեկի գործում կռվել է, մեր գյուղի բարձունքներում դիրք է բռնել...
- Մեզ ցույց ես տվել հետքերը...
- Մեր ձորակում էլ մեծ կռիվներ են եղել...
Ղարաբաղը միշտ ճակատագրեր է որոշել: Մենք՝ ղարաբաղցիներս, որպես կռվող, կարծես թե առանձին էթնիկական խումբ ենք...
- Իսկ բերդածորցիները...
- Լսիր, Կամո, 1828-ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Յուրուտանց Պետին ռուսական բանակի եւ ձորակի զինվորների համար փայտից վառող էր պատրաստում: Պապս՝ Դավանա Սահակը դաշնակների սուրհանդակն էր, տրեխի մեջ նամակ է տարել Անդրանիկին: Ղոնաղանց Սահակը իր զինակիցների հետ կռվել է Նուրի փաշայի դեմ, մինչև բնակիչները գաղթել են... 1918-ին լավ կռվողներ են եղել ճոռուցց Մանուչարը, Ոսկանաց եղիշը...
Հակոբ Մելքունովը Թուրքմենստանում բանակի հեծյալ բրիգադի հրամանատարներից է եղել, հետպահները ու սպանել է բանաձիգի դիմակի տակ թաքնված էնվեր Փաշային՝ սուլթանական Թուրքիայի նախկին ռազմական նախարարին, երիտթուրքերի պարագլուխներից մեկին, որ Եղեռնի կազմակերպիչներից էր, նպատակ ուներ Միջին Ասիայում ստեղծել իսլամական պետություն: Մի փաստ էլ ասեմ, դժվար կհավատաս. անձի պաշտամունքի տարիներին՝ 1937-ին, Մելքունովը ձեռքազրկվել է եւ դատապարտվել 20 տարվա ազատազրկման արտառոց մեղադրանքով, իբր համագործակցել է էնվեր փաշայի հետ: Մեր թիկունքը, մեր ուժը մեր լեռներն են եղել: Մենք միշտ լավ կռվել ենք, բայց դիվանագիտության մեջ տանուլ ենք տվել: Կամո՛, իսկ գիտե՞ս, որ Ավարայրում Ղարաբաղի գունդ, այրուծի է կռվել:
- Ախպոր պես՝ մի փշիր: Չեմ հավատում: Գրած ցույց տուր:
- Հավատում ես, աչքերիդ փայլը քեզ մատնում է: Ժամանակը գա՛ կտանեն Մատենադարան, ցույց կտամ: Հայկական հողի ամեն մի հատված ունի իր բնորոշ գիծը. հայտնի են Սասունի պարը, Շիրակի երգն ու բանաստեղծությունը, Արցախի գորավարներ տալը, քաջ կռվելը...

- Գրքե՞ր ես տալու տանեմ կարդամ:
- Եթե զինվոր ես ուզում դառնալ, սրանք կարդա,- գրադարակից հանեց Անդրանիկի ու Գեուրգ Չաուշի մասին գրքերը:
- Եթե մարդ ես ուզում դառնալ...
- Ես մարդ չե՞մ,- վիրավորվեց աշակերտը:
- Մարդ ես, բայց ես ավելի խոր իմաստ նկատի ունեմ: Աշխարհայացքդ պիտի լայնացնես, որ կարողանաս ազգիդ ծառայես, հասկացա՞ր,- ու Նժդեհի «Բաց նամակ հայ մտավորականությանը» բրոշյուրը դրեց գրքերի վրա:
Հիշեցին դպրոցից մի դեպք: Կամոյին հանցեցին դասից, 10-րդում էր սովորում, գրուցեցին դեսից-դեմից, փորձելով վստահության մեջ մտնել, բայց աշակերտը հասկացել էր, թե ովքեր են եւ ինչի համար են հարցաքննում:
- Դասին ինչի՞ց եք խոսում:
- Նյուտոնից, Ֆարադեյից...
- Իսկ ազատ թույններին...
- Ազատ թույն չենք ունենում:
- Դասերից դուրս Հայաստանի մասին Մկրտչյանը ի՞նչ է պատմում...
- Ավիանոդներ ենք պատրաստում:- Մինչդեռ ուսուցիչը Կամոյին վստահել ու պատմել էր, թե իրենք՝ ուսանողները, ինչպես են Եռագույնը Գորիսի շրջկոմի շենքի վրա բարձրացրել, Կամոն գիտեր նաեւ, որ նրա կուսակցական մականունը Քուրա էր:
Կեսգիշերն անց էր, ամբողջ մտավ նայեց Մեծ Հայքի քարտեզին, շրկած գրքերին.
- Երեխատեր ես, Առնո:
Կամոն հասկացավ, որ սա նրա առաջին հանդիմանությունը չէ:
- Չեմ ասե՞լ գործ չունես,- ու կարծես զգալով, որ մի քիչ կպիտ ստացվեց, փորձեց մեղմել,- մանկության ընկերներ ենք, հարեւաններ ենք, մի անգամ մեր խնձորը քաղել է՝ ծեծել եմ:- Տղաները ծիծաղեցին, բայց աներոջ դեմքին ժպիտի նշույլ անգամ չկար:

Հաջորդ օրը մտավ դասարան, տեսավ կավիճն ու սրբիչը ուսուցչի սեղանին անփույթ ընկած: Շարժվեց արագանքը փռվեցին դասարանով մեկ: Կարենն ու ուսուցչի փոքր քույր Անուշը՝ դասարանի գերազանցիկները, ամոթից կարմրած՝ համարձակվեցին վեր կենալ ու հավաքել: Ուսուցիչը խստապահանք էր, վայ նրան, ով Նյուտոնի, Արքիմեդի, Պասկալի օրենքները սերտած չլիներ: Երեխաները եւ վախենում, եւ սիրում էին նրան:
- Նյուտոնի խոսքն էր բանաձեւը,- ուսուցչի հայացքից Անահիտը շփոթվեց, կարմրեց, կնկմաց: Ուսուցչին աչքունքով ցույց տվեց պատից կախած պլակատը, որի վրա մանրակերտ ձեռագրով, կարծես տպագիր, բանաձեւերն էին գրված: Աշակերտուհին նայեց, հիշեց, կրկնեց ու էլ երբեք չէր մոռանա:
Կարենը ձեռքը մատարանի տակ պահած՝ աչքի պոչով նայեց ժամացույցին, դասագիրքը փակեց ու դրեց պայուսակի մեջ: Ինքնընդհատները հետեւեցին նրան: Դասի վերջին թույնները հատկապես վատ ու միջակ սովորողների համար ուրախության պահեր էին: Ուսուցիչը ժպտաց, հասկացավ, որ դասին 10-15 թույն է մնացել.

- Ձեյթունի ու Սասունի մասին արդեն պատմել եմ, հիմա լսեք Մուսա լեռան հերոսամարտի մասին... Գերադասեցին կռվել ու մեռնել... Ու փրկվեցին...
Ձանգը հնչել էր, բայց ոչ մեկը տեղից չէր շարժվում: Քանի որ վերջին ժամն էր, ուսուցիչն ավարտեց պատմությունը, հետո անցան ֆիզիկայի կաթինետ, որը հարուստ կահավորված էր եւ որտեղ հնարավոր էր ամեն փորձ անել: Հանեց ու կախեց Հայաստանի ու Ադրբեջանի քարտեզները: Պատմեց Ղարաբաղի պատմությունը 1917-1923 թվականների ու բռնակցվել Ադրբեջանին:

Մի քանի օր անց ՊԱԿ-ի երկու աշխատող մտան դպրոցի տնօրենի աշխատասենյակը: Զրույցի կեսից Միքայել Մկրտչյանը բարձրացրեց ծայրը.
- Այստեղ ղեկավարը ես եմ, հակախորհրդային որեւէ քարոզի համար ինքս եմ պատասխանատու: Եվ մի մոռացեք, որ 40 տարվա կոմունիստ ու պրոպագանդիստ եմ եւ Ադրբեջանի պատմություն եմ դասավանդում: Այնպես որ, այլեւս ձեզ այստեղ չտեսնեմ:
Նույնիսկ հակառակորդները պատկառում էին Միքայելից, եւ անվտանգության մարմնի ներկայացուցիչները տեղի տվեցին.
- Ամուսնացրեք, ընկեր Մկրտչյան, զուգե խելքը զուխը հավաքի...
- Իհարկե, իհարկե, լավ խորհուրդ է, կամուսնացնեմ:
Երեկոյան սեղանի շուրջ համբերահատ ձեռքը սեղանին զարկեց.
- Վերջ տուր ազգայնական զաղափարներին:
Հայրը գիտեր, որ ամեն մի քարոզ ու արգելման փորձ անօգուտ է: Որդին հացը կիսատ թողեց ու լուռ անցավ իր սենյակը: Խորթ մայրը թեյի բաժակը ետեւից տարավ:

Ֆիզիկայի գործնական պարապմունքները արտակարգ հետաքրքիր էին անցնում: Ստեղծ էին սարքեր ու կախել կաթինետում. մի կողմում հետաքրքրաշարժ հարցերն էին, մյուսում՝ պատասխանները, բայց խառնաշփոթ ու շեղած: Էլեկտրական հոսանքի լարերով այնպես էին միացված, որ հարցը ընտրելու դեպքում լամպը վառվում էր ճիշտ պատասխանի վրա ու մնում աշակերտի հիշողության մեջ: Նաեւ ինքնաշարժ գործիքներ, շոգեմեքենայի մոդել էին պատրաստում:
- Հրթիռ ենք պատրաստելու,- եւ ուսուցիչը գծագիրը միացրեց գրատախտակին:- Իսկ որպեսզի պատրաստեք ինքնաթիռի մոդել, հարկավոր է ունենաք գծագիր կարդալու ունակություն, գործիքներին գերազանց տիրապետում, համբերություն:
Կարենը, Անուշը, Յուրան, Հովիկը ուրախությունից վեր թռան:
Քիմիական նյութեր, սովորաբար, մետաղներ, լարեր, մանրաթիթեր փռվեցին սեղանին, ու մի ամբողջ ամիս երեխաները աշխատում էին, իսկ գյուղը հետաքրքրությամբ սպասում էր: Այդ տարիներին իրականացվող կրթական բարեփոխումները, որով պահանջվում էր հետեւողականորեն զարգացնել երեխաների աշխատանքային ունակությունները, դպրոցում նախասիրած մասնագիտությունից ունակություններ ձեռք բերելը, աշխատանքային-մասնագիտական հասկանալի դրսևորելու համար լավագույն արհեստանոցներ ու լաբորատորիաներ ստեղծելը ոգեւորել էին ուսուցչին, եւ նա մեծ ուշադրություն էր դարձնում աշակերտների ստեղծագործաբար մտածելու եւ գործելու կարողունակության զարգացմանը:
Դպրոցի բակում մեծ բազմություն էր հավաքվել: Ուսուցչի՝ «մեկնարկ» խոսքի վրա հրթիռը ծուխ արձակելով օդ բարձրացավ: Հիացական ճիչեր, բացականչություններ, փորձարկումը հաջող անցավ, իսկ նրանք, ովքեր չէին տեսել, խնդրեցին ու մեկ շաբաթ հետո փորձարկումը կրկնվեց:
Այն տարիներին գյուղական դպրոցի ուսուցիչներին բանակ չէին գորակոչում, բայց որպես «քաղաքական անբարեհույս», տղան հայտնվեց Չեյաբինսկի տանկային գործարանում, եւ երբ տանկիստի համազգեստով լուսանկարը քույրը տարավ դասարան, այն ձեռքից ձեռք անցավ. ուսուցիչն իրենց համար իղեպակական, անհասանելի կերպար էր, որին հետագայում էլ պիտի ձգտեին նմանվել:

ՆԱԴԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

ԻՆՉՊԵՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ



Երբ սկսվեցին Արթուրյան կողմից Տավուշում սանձազերծված ռազմական գործողությունները, հաշվի առնելով, որ նենգ ոտխը քիրախավորում է խաղաղ բնակչությանը, հատկապես նրա ամենախոցելի խավին՝ երեխաներին, Արցախի սահմանամերձ Թալիշ և Մատաղիս գյուղերի բնակչության անվտանգության ապահովման նկատառումով իշխանություններն իրականացրել են այդ գյուղերի կանանց, երեխաների և տարեցների ժամանակավոր տարահանում քիկունքային համայնքներ: Երկրի նախագահ Արայիկ Զարուբյանի համձնարարականով նրանք ապահովվել են կացարանով ու սննդով:

Էին մշակույթի վարչության աշխատողներ Գագիկ Խաչատրյանը, Վահիկ Զարուբյանյանը, Երազ Դանիելյանը, Դրմբունու և Ալաշանուն կազմակերպեց նկարչական պարապմունքներ «Նաղաշ» մշակութամանցային բացօթյա ծրագրի շրջանակում: «Նաղաշի» համակարգող՝ վարպետ Լուսին Զալոյանի խոսքով, շրջապատող աշխարհի նկատմամբ երեխաների վերաբերմունքի արտահայտման և տազնապիզացումից ձեռքբազատման ամենավավ միջոցը նկարչությունն է: Նախարարության տրամադրած նկարչական պարագաները բաժանվեցին երեխաներին, և նրանք անմիջապես գործի անցան՝ թղթին հանձնելով իրենց գունազարդ հույզերը: Թեման ազատ էր, բայց երեխաների նկարածը միևնույն բովանդակությունն ուներ՝ խաղաղություն: Բոլորի նկարներում կային կապույտ երկինք, աղավնի, տուն, զինվոր, իսկ



ամենավերևում՝ խաչ: Ոմանք ցանկացան նաև բանաստեղծություն արտասանել:

Մեծերը՝ մայրիկներն ու տատիկները, որոնք խանդաղատանքով հետևում էին իրենց երեխաների ու թոռների ստեղծագործական աշխատանքին, ասացին, որ այդտեղ ամեն ինչ լավ է, շրջապատված են հոգատարությամբ: Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արսեն Ավանեսյանն ամբողջ օրն այդտեղ է, և որևէ խնդիր լինելու դեպքում նրա օգնությամբ լուծվում է, սակայն այդտեղ անցկացրած հանգիստ օրերից, երբ շատ ժամանակ ունեն իրար հետ զրուցելու, շփվելու, գյուղական աշխատանքի շրջափակում, իրենց հանգստություն չի պատճառում, և փափագում են օր առաջ լինել իրենց տներում՝ Թալիշում ու Մատաղիսում, քանի որ տղամարդիկ դիրքերում են, իսկ բաղ ու բանջարանոցի գործերն իրենց են սպասում:

Չաջորդ օրերին դարձյալ այստեղ շարունակվեցին մշակութային միջոցառումները: Մշակույթի վարչության մեկ այլ խմբի ուղեկցությամբ այցելեց Շուշիի Խանդամիրյանի անվան տիկնիկային թատրոնը, որը երկու տեղամասում էլ ներկայացրեց «Երեք խոզուկներ»-ը՝ մեծ հրժվանք պատճառելով փոքրերին ու մեծերին:


Իսկ կիրակի օրն ամենահագեցածն էր ու ամենախեղաբերը: Տաղավար տոներից մեկն էր՝ Քրիստոսի պայծառակերպության օրը, որը ժողովրդի մեջ տարածված է Վարդավառ անունով: Հոգևոր սպասավորը օրհնության ծես կատարեց, ապա շարունակվեցին կրթամշակութային ու ժամանցային ծրագրերը: Համերգային ծրագրով ելույթ ունեցան «Ղարաբաղ», Արցախի պարի պետական, «Մենք ենք, մեր սարերը» ազգագրական համույթները, իսկ Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի թատերական խումբը հանդես եկավ խաղիկներով: Կերպարվեստի թանգարանն էլ կազմակերպել էր «Հաղթանակի գինը» խորագրով լուսանկարների ցուցահանդես: ԿԳՄ նախարարության աշխատակազմի կրոնի և ազգային փոքրամասնությունների բաժինը ներկայացրեց բաժանեց եկեղեցական և ազգային տոներին վերաբերող նյութեր:

Օրվա ամենասպասված պահը ավանդական «Ջրոցին» էր, որի համար առատ ջուր էր ապահովվել ԱՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը:

«Covid-19»-ով պայմանավորված՝ այս ամառ Արցախի դպրոցականների համար ճամբար չկազմակերպվեց: Սակայն Թալիշի և Մատաղիսի երեխաների՝ Դրմբունու ու Ալաշանուն անցկացրած օրերը պակաս ճամբարային չէին:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ



Բոլոր նրանք, ովքեր ապրում են խոսք ու գործ բռունցքած, իրենց վարքով ու կենսագրությամբ սովորեցնելով ու օրինակ լինելով, սերունդների երթում մնում են իբրև լուսավոր ներկա՝ անցյալ չզարծող: Ապրած կյանքի տևողությունը տարիների գունամարային արժեքով չի որոշվում բնավ, այլ ապրածի բովանդակությամբ, տվածի պարունակով ու թողածի լուսավորությամբ: Եվ այդ դեպքում հեռացումը ոչ թե վաղաժամ կամ ժամանակին հասկացություններով է չափվում, այլ հեռացումի հետ կապվող ցավի մեծությամբ ու դեռևս ստանալիքի ակնկալիքով: Իսկ Անդրեյ Սուրենի Ղարամյանից ստանալիքի մեծ ակնկալիք կար. սաների հուշում մնացել է նրա բարեժպիտ հայացքը, թվերի աշխարհին միախլուսված ժպտալիք կատակը, որ դուրսից էր դարձնում յուրաքանչյուր բարդ խնդրի լուծում, իսկ Ակնաղբյուրի դպրոցի մանկավարժական աշխարհը կկարողի այն կարևոր ներկայությունը, որը բարեխառն էր դարձնում կուլեկտիվի մթնոլորտը:

Նրա ապրած կյանքը ձեռքբերումների շղթա է, որ օղակ առ օղակ ազուցվել է աշխատասիրությամբ, նվիրվածությամբ ու հաստատամտությամբ: Խոսքով՝ լավատեսություն ներարկող, հայացքով՝ ժպտալիք ու բարեժոպ, գործով՝ մաքենատիկական ճշգրիտ հաշվարկով ու կարգապահությամբ. այսպիսին էր Անդրեյ Ղարամյանը:

Հաղթանակների դափնեկիր էր դեռևս երիտասարդության տարիներից՝ դառնալով ԽՍՀՄ մարզական առաջնության չեմպիոն: Արցախյան գոյամարտի տարիներին փոխվել է նրա՝ երկրին ծառայելու օրինակն ու վարքը թե՛ Գոյամարտի մասնակից լինելով, ինչպես բոլորը, թե՛ անկախ Արցախի պետականակերտման ճանապարհին իր փորձն ու գիտելիքներն ի սպաս դնելով՝ որպես ԼՂՀ ԳԽ պատգամավոր: Ձեռքբերումները երբեք չդարձան դրոշակ՝ ի ցույց արածի, առավել ևս իբրև իրավունք չկիրառվեցին մեծ հավակնությունների ու տիտղոսների ստանալիքի հաշվեկատարությամբ, հակառակը և արժանավոր մարդու դեպքում օրինակալից եղավ. մալժվեց մանկավարժական գործին՝ ուսուցչությանը, որի կոչումը բարձր է բոլոր պաշտոններից ու տիտղոսներից: Դարձավ մաքենատիկայի ուսուցման լուսավորիչ, աշակերտների հարազատ ընկեր ու մեծ բարեկամ: Ունեցավ կյանքի ամենամեծ հաղթանակը. սաների սիրո դափնեկիրը եղավ ու սերունդների հիշողության լուսավոր էջը բաց ու անջինջ թողեց իր անվամբ...

Հիշատակդ լույս, ուսուցիչ...
Արթուր ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի ուսուցիչ

ԱՆԺԱՄԱՆԱԿ ՄԱՐԱԾ ԼՈՒՅՍԵՐ...



Խորը ցավ, կակիծ, սրտի մորմոք ապրեցինք բոլորիս սիրելի Գայանեի անժամանակ, ողբերգական մահվան բռնով...
...Ինչքան գեղեցկություն, մարդասիրություն, ազնվություն կար թո սրտում, մարդկային ինչ լավագույն

հատկանիշներով էիր օժտված դու՝ մեր սիրելի գործընկեր, մեր անմոռանալի Գայանե միայն...
Այդ ի՞նչ դաժան վայրկյան էր, որ քեզ բաժանեց միմուճար թո որդուց՝ բոլորիս սիրելի մեր աշակերտ Սասունից:
Ողջ կուլեկտիվով սզում ենք թո անժամանակ մահը մեր սիրելի, մեր անմոռանալի Գայանե...
Ցավակցում ենք հարազատներիդ, Արցախյան պատերազմում ամուսնուն՝ թո հայրիկին կորցրած սզակիր մայրիկիդ՝ տիկին Անժելային:
Դու միշտ կապրես մեր հուշերում, մեր լուսավոր Գայանե:

Խորապես վշտացած ենք դպրոցի փոքրիկ սան, մանկան երազանքներով լի իմնամյա Վլադիմիրի անժամանակ մահվան կապակցությամբ, ցավակցում և մեր զորակցությունն ենք հայտնում մանկավարժ ծնողներին՝ Հակոբին, Շուշանին, հարազատներին: Մեր հարգելի վշտահար գործընկեր-ծնողներ, եղեք ուժեղ, դիմակայեք ծանր հարվածին...
Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան հ.2 հիմն. դպրոցի ուսուցչական և ծնողական հանրույթներ

ՏՆՈՒՐ ԱԶՔԵՐՈՎ ՈՒՐԱՆ ԱՐՏԻՍԱԸ

13 Թեպետ նրա հռչակը վաղուց թևածուլ է հայրենիքի սահմաններից դուրս, և նրան սիրել ու զնահատել է նաև օտար հանդիսատեսը, այնուամենայնիվ, մեր «փոքր ածու» լինելու հանգամանքը յուրատեսակ ուղեփակոց է հայ հանճարների դեպի մեծ աշխարհ տանող ճանապարհին:

Մեծ դերասանին բաժին հասած անձնական տառապանքն էլ մեծ էր: Տեղին է հիշել իր մեծ ժամանակակից՝ Սիլվա Կապուտիկյանի բնութագրությունը. «Տարիներ շարունակ նա իր հոգու ամենախորունկ ծալքերում իրեն պահեց իր ահռելի տառապանքը ու մեզ տվեց ծիծաղ, խնդություն, իր ծիրքերի լույսը վայելելու անսահման երջանկություն»: Կյանքի վերջին շրջանում նա տարիներով ոչինչ չխաղաց: Ոչ թե խաղալու ցանկություն չուներ կամ հոգնել էր, այլ հարմար բան չէր գտնում, որովհետև երբեք հենց այնպես բեմ դուրս չէր գալիս: 1986-ին նա ստեղծեց իր թատրոնը՝ այն անվանելով իր մեծ ուսուցիչ՝ Վարդան Աճեմյանի անվան արտիստական թատրոն: Նրա ստեղծած թատրոնն այն տաղանդավոր արվեստագետների համար էր, ովքեր իրենց տեղը չէին գտնում ուրիշ թատրոններում, նաև՝ «թատրոնը ստեղծվեց, որ ես տուն ունենայի, որ բեմադրեի, խաղայի, ուրախանայի, հաց ուտեի...»,- ասում էր արտիստը: Առաջին և ցավոք միակ ներկայացումը Մարսել Պանյոլի «Հացթուխի կինը» ներկայացումն էր, որը դարձավ նրա «կարապի երգը»: Երբ տարիներ անց՝ 2004-ի հունիսին, եղբոր՝ Ա. Մկրտչյանի գլխավորությամբ վերաբացվում է թատրոնը՝ վերանվանվելով իր հիմնադրի՝ Մ. Մկրտչյանի անունով, վերականգնվում է նաև «Հացթուխի կինը» ներկայացումը: Հանդիսատեսը հնարավորություն ստացավ նորից վայելելու Միտի խաղը՝ այս անգամ արդեն էկրանին: Արցախցիներիս նույնպես բախտ է վիճակվել դիտելու այդ ներկայացումը, եթե չեմ սխալվում, 2010-ին: Ասեմք, արտիստը Արցախյան պատերազմի ժամանակ եղել է Արցախում, Ամերիկայից այստեղ հասցրել զրահաբաճկոններ, դեղորայք, մեկանգամյա օգտագործման սրսկիչներ և ամբողջ տությամբ ապրում էր Արցախի ճակատագրով: 2010թ. Ստեփանակերտի քաղաքապետարանի համայնքային ավագանու որոշմամբ, մայրաքաղաքի 38-րդ թաղամասի կենտրոնական փողոցն անվանվել է Մ. Մկրտչյանի անվամբ, ասել է թե՛ նա դարձել է իր սիրած երրոսական քաղաքի անբակտելի մասնիկը և իր ներկայությամբ նոր գույն ու իմաստ հավելել արցախյան ոստանին:

«Ամենից բարդը, ամենից դժվարը ինձ համար էն վերջին, էն իդեալականն է, էն կերպարը, ամենաբարդը, որ դեռ պիտի գա», - երազում էր արտիստը: Նա երազում էր Օթելլո խաղալ, որ նման չէր լինի իր տեսած բոլոր մավրերին, ինչպես ինքն էր ասում՝ մա կլինեք «վայրենի և մաքուր-մաքուր, անաղարտ և շատ մեծակ»: Երազանքն էր Ֆիլմ նկարել առանց հեծանիվի մեծացած երեխայի մասին, որպիսին ինքն ու իր սերնդակիցներն էին: Կիսատ կյանք, կիսատ մնացած երազանքներ... ու հավերժ բացակա ներկայություն... Ուզում ես հավատալ նրա վերջին ցանկությանը. «Ես կգամ, երբ թատրոնները կլինեն ծրի, իսկ մարդիկ թատրոն կհաճախեն կոստյումով»...

ՄԵԼԱՅԱ ՄԻՆՈՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՄԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԱՐԹՈՒՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ



Համավարակի արագ տարածումն աշխարհով մեկ նոր մարտահրավերներ է նետում կյանքի բոլոր ոլորտներին գրեթե ամեն ինչ փոփոխության ենթարկելու պարտադրանքով: Լավատես մարդիկ արժանապատվությամբ են հաղթահարում համավարակի հետևանքով առաջացած խնդիրները, իսկ նաեւ կրեատիվությամբ օժտվածները ավելի հեշտ են հարմարվում կյանքն ու առողջությունը պահպանելու նոր կանոններին: Մեր գրուցակիցը լավատես, կրեատիվ, ժամանակի մարտահրավերներին համահունչ հակահարված տալու պատրաստակամ Արթուր ԱՌՈՒՇԱՆՅԱՆ է, որի հետ գրուցելն անգամ լիցքավորում է դրական էներգիայով, դժվարությունների դեմ չնահանջելու կամքով:

րատեսի ազգային ֆեդերացիայի հավաքականի առաջատար մարզիկ է, Արցախի «Օյամա» կիրկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի մարզիչ, իսկ «Լուսարար»-ի մարզական էջի՝ սիրված հյուրերից մեկը:

- Արթուր, շարունակում եք, արդյոք մարզական և մարզչական գործունեությունը համավարակի շրջանում, ի՞նչ խնդիրներ կան:

- Որպես մարզիկ փորձում եմ իրավիճակը նպատակային օգտագործել եւ ավելի շատ ուշադրություն եմ դարձնում հանգստիս. վերջապես կա այդ հնարավորությունը: Ամեն մրցաշարի մասնակցելուց հետո մտածում էի, որ սրանից հետո պետք է հանգստանամ, բայց չէր ստացվում, նորից որոշում էի աշխատել մարզավիճակիս վրա ու մասնակցել հերթական առաջնությանը: Կարանտինն ու դրա հետ կապված սահմանափակումները նպաստեցին, որ ժամանակ տրամադրեմ հանգստին: Իսկ որպես մարզիչ, ընդհակառակը, այս շրջանում պարապմունքներ անցկացնելու նոր մեթոդներ եր պետք մշակել, որը լարված աշխատանք է պահանջում: Առցանց պարապմունքները գուցե եւ օգնում են, որ մարզիկները պահեն լավ մարզավիճակ, հետ չմնան պարապմունքի ծրագրից, բայց չեն կարող լիարժեքությամբ փոխարինել մարզադահլիճում անցկացվող պարապմունքներին: Առցանց պարապմունքներն ունեն իրենց բացասական կողմերը ու դրա հետ կապված՝ առաջացնում են խնդիրներ մարզիկների ու մարզչի համար: Բայց բոլոր խնդիրները լուծել հնարավոր է: Պետք է օգտագործել կրեատիվություն եւ մշակել ու մատուցել այնպիսի վարժություններ, որոնց համար քիչ տարածք է պետք, քանի որ ցանց մտնող մարզիկներից շատերը փոքր տարածքում են պարապում: Մարզչի համար էլ կան դժվարություններ: Պետք է ուշադիր նայել էկրանին՝ միաժամանակ բոլորին հետեւելով ու ցուցումներ տալով:

- Կիրկուշինն անհնար է պատկերացնել առանց մենամարտերի, ինչպե՞ս եք կազմակերպում դրանք:

- Մի քանի անգամ մարզադաշտում բացօթյա պարապմունքներ կազմակերպելու համար: Մենամարտերին ընդունված է մասնակցել առանց կոշիկների, բայց մարզադաշտում պարապելու համար դա անհարմարավետ է: Մի կողմից արեւի ճառագայթներն են վատ անդրադառնում, մյուս կողմից մարզադաշտում հավաքված տարբեր մարդկանց հայացքներն են խանգարում մեր պատանհի մարզիկներին կենտրոնանալ պարապմունքի վրա: Իսկ դրանցից բացի, սահմանափակումները նաեւ մարզադաշտի պարապմունքները չեն թույլատրում:

Դժվար թե արցախցիների մեջ լինի մեկը, որը լսած չլինի Արթուր Առուշանյանի մարզական ռեկորդային համբավի մասին, այնուամենայնիվ, եւս մեկ անգամ մեր հայրենակցով հպարտանալու առիթ տանք մեզ ու մշենք, որ Արթուրը կիրկուշին կարատեի Եվրոպայի հնգակի չեմպիոն է, աշխարհի՝ եռակի, ԳԳ կիրկուշին կարատեի ազգային մարզիչն է, Արցախի «Օյամա» կիրկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի մարզիչն է, «Լուսարար»-ի մարզական էջի՝ սիրված հյուրերից մեկը:



պարապել դահլիճից դուրս: Մենամարտերին ընդունված է մասնակցել առանց կոշիկների, բայց մարզադաշտում պարապելու համար դա անհարմարավետ է: Մի կողմից արեւի ճառագայթներն են վատ անդրադառնում, մյուս կողմից մարզադաշտում հավաքված տարբեր մարդկանց հայացքներն են խանգարում մեր պատանհի մարզիկներին կենտրոնանալ պարապմունքի վրա: Իսկ դրանցից բացի, սահմանափակումները նաեւ մարզադաշտի պարապմունքները չեն թույլատրում:

- Բայց պարապել պետք է, ի՞նչ անել:

- Պետք է ինքնուրույն պարապել, չդադարեցնել ֆիզիկական զարգացումը: Կան այնպիսի մեթոդներ, ինչպես օրինակ, մարտավարական խաղեր, սթրեսն ու ճնշվածությունը հանելու լավագույն միջոց ենք ընտրել արցախյան բնության անօրինակ մեթոդները: Բնությանը մեր նպատակն է հանգստանալ: Բնությանը իսկապես տպավորված ենք, հատկապես, որ մարդու ոտք ու ձեռք կարծես թե չի դիպել այդ մասին: Աղբի կույտեր կան խարույկի հետքեր չկային: Ինչո՞ւ չհամատեղել պարապմունքն ու մաքուր օդը, ջրվեժից արտացոլվող ցողերը, բնածայները, որոնք թույլ են տալիս բնության հետ ներդաշնակ զգալ մեզ: Իսկ համացանցում տեղադրելն ավելի շատ այն իմաստն ունի, որ աշխարհին ցույց տանք, որ Արցախում կիրկուշին կարատեի պարապմունքները շարունակվում են: Արշավները շարունակական կլինեն:

րության եւ տեխնիկայի մշակում, տակտիկայի քննարկում, որոնք հանգիստ վիճակ ու ժամանակ են պահանջում, ուրեմն՝ այս ժամանակաշրջանը պետք է օգտագործել դրա համար եւ ինքնագարգացմամբ զբաղվել: Ծանր շրջան է հատկապես այն մարզիկների համար, որոնք տարիքային խումբ են փոխում կամ մրցույթի են պատրաստվում: Շատ են հարցնում, թե երբ կարելի կլինի մրցույթների գնալ: Պարզ է, թե ինչքան կտեսնե սահմանափակումները, իսկ ավելի մտահոգիչ է, թե ինչ վիճակում կլինեն մեր մարզիկները այսպահից հետո: Աշխատում ենք հնարավոր ծեւերով քաջալերել մարզիկներին այս անսովոր մարտահրավերին դիմակայելու, սթրեսներին չտրվելու համար:

- Ի՞նչը կարող է ավելի լավ հանել սթրեսը, եթե ոչ արցախյան հրաշալի բնության գրկում քայլարշավ կազմակերպելը համախոհների փոքր խմբով: Չե՞ր ֆեդերացիայի կողմից համացանցում տեղադրված նկարներն են անգամ փոխանցում դրական լիցքեր ու կամքի ուժ: Հավանաբար այդ նպատակին էր միտված արշավ կազմակերպելը:

- Իհարկե, սթրեսն ու ճնշվածությունը հանելու լավագույն միջոց ենք ընտրել արցախյան բնության անծնական բնույթից մեկը քայլով գնալն ու տեղում պարապելը ավագ մարզիկների մասնակցությամբ: Իսկ խմբի ամենահասակով մարզիկի՝ Սերգեյ Անդրյանի վերջերս բացահայտած ու նրա կողմից անվանված «Վիկտորիա» (հաղթանակ) ջրվեժի տարածքում (Ասկերանի շրջան) գտնվելն ու պարապելը հիանալի լրացում է հանդիսացան մեր նպատակի համար: Բնությանը իսկապես տպավորված ենք, հատկապես, որ մարդու ոտք ու ձեռք կարծես թե չի դիպել այդ մասին: Աղբի կույտեր կան խարույկի հետքեր չկային: Ինչո՞ւ չհամատեղել պարապմունքն ու մաքուր օդը, ջրվեժից արտացոլվող ցողերը, բնածայները, որոնք թույլ են տալիս բնության հետ ներդաշնակ զգալ մեզ: Իսկ համացանցում տեղադրելն ավելի շատ այն իմաստն ունի, որ աշխարհին ցույց տանք, որ Արցախում կիրկուշին կարատեի պարապմունքները շարունակվում են: Արշավները շարունակական կլինեն:

- Ի՞նչ եք խորհուրդ տալիս մարզիկներին, մարզիչներին եւ առհասարակ արցախցիներին ոչ ստանդարտ այս իրավիճակում:

- Խորհուրդ եմ տալիս գինվել համբերությամբ ու լավատեսությամբ, խուճապի չմատնվել, ոչ էլ անլրջությամբ վերաբերվել համավարակը կանխարգելիչ միջոցներին: Պահպանեք ֆիզիկական ակտիվություն, զբաղվեք ինքնագարգացմամբ, կոփեք իմունային համակարգը, մի տրվեք սթրեսների ազդեցությանը: Բոլորին մաղթում եմ շուտափույթ վերադարձ բնականոն կյանք:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Խոսք հիշատակի ՆԻԿՈԼՅՆ ՄԱՆՈՒՀԱՐՅԱՆ



Երբ ուսուցիչ է մահանում, նրա վաստակի չափ ցավ ու ավստասանք է մնում աշխարհում...

Մարդ-լեգենդ էր նա, մարտիկ ու մանկավարժ, աջակից ընկեր ու սիրատուն հայր, անդամաճան կողակից ու տոկուն արցախցի...

Բնութագրիչ բառերն էլ քիչ են այն բեղուն դասերի, գրույցների, նրա կողմից համազորակցիներին հասցված բազում աջակցությունների համեմատ, որոնց ընթացքում ճանաչել, սիրել ու երախտապարտ ենք եղել ընկեր Մանուչարյանին:

Նիկոլայ Մանուչարյանը ծնվել է 1922 թվականին Ակնաղբյուր գյուղում: 1939 թվականին ավարտելով Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանի ֆիզիկամաթեմատիկական բաժինը: 19-ամյա պատանի էր, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: 1941 թվականի նոյեմբերին գորակոչվել է Կարմիր բանակ: Մարտական մկրտությունը ստացել է Կովկասի համար մղված մարտերում: 1943 թվականին մասնակցել է Կուրսկ, Օրյոլ-Բելգորաթ քաղաքների, այնուհետև Կիևի ազատագրական մարտերին: Միևսկի գրավման ժամանակ ծանր վիրավորվել է: Ապաքինվելուց հետո 1944 թվականին գորացվել է և վերադարձել հայրենի գյուղ: Նույն թվականին աշխատանքի է անցել գյուղի ութամյա դպրոցում: 1956 թվականին ավարտել է Բաքվի հեռակա մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ բաժինը: Դպրոցում որպես գինղել աշխատել է 1976 թվականից: Զինղելի փայլուն աշխատանքի համար նա արժանացել է «Քաղաքացիական պաշտպանության գերազանցիկ» կրծքանշանի: 1949 թվականից սկսած՝ 8 տարի վարել է ուսման վարի, 13 տարի՝ տնօրենի պաշտոնները: Արժանացել է 15-ից ավելի շքանշանների ու մեդալների, բազմաթիվ պատվոգրերի: Սիրված մանկավարժի սաները դարձել են բարձրատիճան գինվորականներ, բժիշկներ, ուսուցիչներ...

Նիկոլայ Մանուչարյանի մեջ հայրենիքի, հարազատ գյուղի, դպրոցի, համազորակցիների հանդեպ սերը չէր, որ արդեն թռչակառու մանկավարժին դպրոց էր բերում՝ շարունակելու մաթեմատիկայի ուսուցիչների գործը, ովքեր Արցախի գոյապայքարի բովում էին: Եվ վստահեմք, որ նրա դաստիարակած հայրենյաց պաշտպանների շնորհիվ արցախահայության վերջնամատակը կիրականանա, ու լուրն այդ աղոթք ու ավետիս դարձած, այցի կզա նրա լուսաշող շիրիմին...

Հանգչիր խաղաղությամբ, ավագ գործընկեր...

Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի Կարդան Զիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Մեսրոպ Մաշտոց Համալսարանը հայտարարում է պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի թափուր պաշտոնների մրցույթի հետևյալ ուղղություններով:

- Պատմություն
Կովկասագիտություն
Տնտեսագիտություն
Կառավարում
Կիրառական ծրագրավորում
ՏԲԿ մասնագետ
ՏՀ նախագծող
Մրցույթին մասնակցելու համար ՄՄԳ Գիտխորհրդի քարտուղարությանն են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը (փաստաթղթերի ներկայացման ժամկետը մեկ ամիս է՝ նշված հայտարարությունը հրապարակելու պահից):
1/ մրցույթային ընտրությանը մասնակցելու մասին դիմում՝ հասցեագրված ռեկտորին
2/ համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական շարադրությամբ,
3/ կարգերի հաշվառման անձնական թերթիկ,

- Հայոց լեզու
Գրականություն
Ռուսաց լեզուն՝ որպես օտար լեզու
Անգլերեն լեզու և գրականություն
Գերմաներեն
Ադրբեջաներեն
Մանկավարժություն
Հոգեբանություն
Պարսկերեն

